Ազգ
Azg
armenian daily

Յունուար
20
Չորեքշաբթի
1993

օրաթերթ
Գ տարի, թիւ 10 (261)
գինը 2 ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Երեւան

Պայթել է «Զվարթնոց»ի էլեկտրաենթակայանը

Ինչպես «Սնարք»-ին հայտնի է դարձել հավաստի աղբյուրներից, հունվարի լույս 19-ի գիշերը պայթյուն է եղել եւ հրդեհ բռնկվել Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանի էներգամատակարարման ենթակայանում: Դրա հետեւանքով կտրվել է Հայաստանն արտաքին աշխարհին կապող տրանսպորտային վերջին ուղին: Աշխատանքներ են կատարվում հանրապետության օդային դարպասի էներգասնուցման շտապ վերականգնման նպատակով: Ըստ վերջին տվյալների, առավոտյան հրդեհը մարել է, վերսկսվել է էլեկտրաէներգիայի մատակարարումը վերգետնյա ծառայություններին եւ թռիչքադաշտին, սակայն օդակայանի բուն շենքը դեռ զրկված է էլեկտրականությունից: Ավելի վաղ «Սնարք»-ը հաղորդել էր հունվարի 20-ին նշանակված հայ ավիատորների գործադուլի մասին, թեեւ պայթյունի եւ գործադուլի միջեւ անմիջական կապ առայժմ չի բացահայտված: ■

Սահման

Գնդակոծվել է Ներքին Կարմիրաղբյուրը

Երեկ եւ նախորդ գիշեր հայ-ադրբեջանական սահմանում մի քանի օր տեւած անդորրը խախտվել է: Վկայակոչելով պաշտոնական աղբյուրները, «Սնարք» գործակալությունը հայտնում է, թե երեկ կեսօրին Ադրբեջանի տարածքից վերսկսվել է Տավուշի շրջանի Ներքին Կարմիրաղբյուր գյուղի գնդակոծությունը: Ըստ նույն աղբյուրների, հանրապետության մյուս սահմանամերձ շրջաններում իրադրությունը հանգիստ է եղել:

Ինչպես Գորիսից հաղորդում է մեր թղթակից **Հասմիկ Բաբաջանյանը**, երեկ ժամը 14-ին Ադրբեջանի Ղուբաթլուի շրջանի տարածքից գնդակոծվել է Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղը: Կան զգալի ավերածություններ: Նույն օրը գնդակոծվել են նաեւ Շուռնուխ գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Ինչպես տեղեկացրել են տեղերի ինքնապաշտպանության շտաբներից, Ղուբաթլուի շրջանի Աղբուլաղի գյուղի մերձակայքում նկատվում են հակառակորդի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ: Սրանք այն նույն հենակետերն են, որտեղից վերջերս գնդակոծվում էր Գորիս շրջկենտրոնը:

Մինչդեռ, ինչպես հայտնում են Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից, երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի տարածքից գնդակոծվել եւ հրետակոծվել են Ադրբեջանի հյուսիս-արեւմտյան սահմանամերձ շրջանները: Միաժամանակ նույն աղբյուրները տեղեկացնում են, թե առայժմ հայկական կազմավորումների հսկողության տակ են մնում Զանգելանի շրջանի գրավված 12 գյուղերից հինգը: Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը այդ շրջանում արտակարգ դրությունը երկարաձգել է մինչեւ փետրվարի 1-ը: ■

Ճակատ

ԿՐԿԻՆ ՀՐԵՏԱԿՈԾՎՈՒՄ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ

Մարտակերտի շրջանում ծանր մարտերը շարունակվում են

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից **Վահրամ Աղաջանյանը**, երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում շարունակվում էր մնալ ծայրաստիճան լարված: Հունվարի 18-ի երեկոյան եւ լույս 19-ի գիշերը աննախադեպ ուժգին հրետակոծության են ենթարկվել Ասկերանի շրջանի Ոսկեվազ եւ Քարագլուխ գյուղերը, ինչպես նաեւ շրջկենտրոնը: Միաժամանակ հրետակոծվել են Մարտունու շրջանի հայկական պաշտպանական դիրքերը: Երեկ լուսաբացին Ադրբեջանի Աղդամի շրջանում տեղակայված կրակակետերից հեռահար հրետանուց հրետակոծվել է Ստեփանակերտը: Կան վիրավորներ եւ ավերածություններ: Զոհերի մասին տեղեկությունները ճշտվում են:

Հունվարի 18-ի երեկոյան եւ լույս 19-ի գիշերը ադրբեջանական բանակի կազմավորումները Մարտակերտի շրջանում անցել են լայնածավալ հարձակման: Սկզբում թշնամուն հաջողվել է գրավել Կիչան գյուղը, սակայն հայկական ինքնապաշտպանական ուժերը վերամիավորվելով անցել են հակահարձակման եւ թշնամուն ստիպել մեծ կորուստներ տալով թողնել գյուղը: Ըստ նախնական տվյալների, հայկական կողմից կա երեք զոհ եւ ութ վիրավոր: Ադրբեջանական բանակի կորուստները կազմում են մի քանի տասնյակ սպանված: Չճշտված տվյալներով, երեկ Մարտակերտի շրջանի երկնքում խփվել է ադրբեջանական բանակի հերթական ռազմական ինքնաթիռը:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը շարունակում են վստահորեն վերահսկել Լաչինի մարդասիրական միջանցքը: Գորիս–Լաչին–Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

Իր հերթին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, թե ադրբեջանական կազմավորումներին հաջողվել է կասեցնել հայկական ուժերի գրոհը Ֆիզուլու շրջանի ուղղությամբ: Մարտերի ընթացքում իբր խփվել է հայկական երկու տանկ: Ըստ նույն աղբյուրների, ադրբեջանական ուժերին հաջողվել է խափանել Հայաստանից Լաչինի միջանցքով Ղարաբաղ զրահատեխնիկա հասցնելու հերթական փորձը: Ադրբեջանական ռազմական գերատեսչության տվյալներով, երեկ եւ նախորդ գիշեր Լեռնային Ղարաբաղի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Աղդամ եւ Ֆիզուլի շրջկենտրոնները: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հայտնվում: ■

Խփվել են եւս 3 ադրբեջանական ինքնաթիռներ

Վկայակոչելով Ստեփանակերտի պաշտոնական աղբյուրները, «Սնարք» գործակալությունը հաղորդում է, թե երեկ Լեռնային Ղարաբաղի երկնքում, Ստեփանակերտի մերձակայքում խփվել է ադրբեջանական բանակի եւս երեք ռազմական ինքնաթիռ: Օդաչուների ճակատագիրն անհայտ է: Ըստ նույն աղբյուրների, Մարտակերտի շրջանի Կիչան գյուղի ուղղությամբ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ձեռնարկած հակագրոհի հետեւանքով ադրբեջանական բանակի կորուստները հասնում են 100-ի:

Եթե հաշվի առնենք նաեւ, որ երեկ ըստ չճշտված տվյալների, Մարտակերտի շրջանում խփվել է եւս մեկ ադրբեջանական ռազմական ինքնաթիռ, ապա միայն հունվարի այս մի քանի օրերին ադրբեջանական օդուժի կորուստներն արդեն կազմում են յոթ կամ ութ ինքնաթիռ: ■

Նոր կռիվներ Անգոլայում: Այն բանից հետո, երբ Անգոլայի ընդդիմադիրները հայտարարեցին, թե չեն պատրաստվում բանակցության նստել, մինչեւ կառավարությունը չդադարեցնի ռազմական գործողություններն իրենց դեմ, երկրում բուռն կռիվները վերսկսեցին: Միայն Հուամբոյի շրջանում շուրջ 10 հազար զինվորներ մասնակցեցին կռիվներին: Ընդդիմադիրները հարձակում գործեցին նաեւ Սոյոյի վրա, պորտուգալացի նավթագործների այնտեղից էվակուացումից հետո:

Վրաստան

Գնդակոծվել է ռուսական ուղղաթիռ

Ռուսական Մի-8 փոխադրական ուղղաթիռը, որը երկուշաբթի Կարաչայա-Չերքեզիայից մարդասիրական բեռներ էր տեղափոխում Աբխազիայի Տղվարչել քաղաք, գնդակոծվել է ավտոմատ զենքից եւ հարկադիր վայրէջք կատարել վրացիների կողմից վերահսկվող տարածքում: Ուղղաթիռի եւ ուղեւորների ճակատագիրն առայժմ անհայտ է: Անձնակազմի երեք անդամներից բացի, ըստ չհաստատված տվյալների, ուղղաթիռում եղել են Աբխազիայի Նախարարների խորհրդի փոխնախագահ Զաուր Լաբախուան, Տղվարչելի վարչակազմի ղեկավարը, Աբխազիայի հեռուստատեսության երեք լրագրողներ եւ մոտ 40 պարկ ալյուր: ■

Աշխարհ

Քլինթոնը ներբողում է Մարտին Լյութեր Քինգին

Երկուշաբթի օրը Վաշինգտոնի Հաուըրդ համալսարանում արտասանած ճառում ընտրյալ նախագահ Բիլ Քլինթոնը ներբող հյուսեց սպանված սեւամորթ առաջնորդ Մարտին Լյութեր Քինգին, ափսոսանք հայտնելով, որ բնավ առիթ չի ունեցել հանդիպելու նրան: Քլինթոնը Քինգին համարեց իր կյանքի ընթացքում «ամենակարկառուն դեմքն ազատության եւ արդարության պաշտպանության ասպարեզում»:

Հայիթիում ընտրական բոյկոտ

Հայիթիի ընտրողների մեծ մասը բոյկոտի ենթարկեց զինվորական իշխանությունների կազմակերպած խորհրդարանական ընտրությունները, որոնց անցկացմանը դեմ էին արտահայտվել նաեւ օտարերկրյա դիվանագետներից շատերը, գտնելով, որ անհրաժեշտ է բանակցված լուծում երկրում տիրող քաղաքական տագնապին: Այնուհանդերձ, կառավարությունը երկուշաբթի օրն անցկացրեց ընտրությունները, հակառակ արեւմտյան երկրների եւ ՄԱԿ-ի կողմից դրանց ապօրինի հռչակման:

Ամերիկյան ներկայության հարցը անորոշ

Հակառակ այն փաստին, որ ամերիկյան ծովայինների առաջին վաշտերը երեկ սկսեցին դուրս գալ Սոմալիից, դեռեւս հազարավոր ամերիկացի զինվորներ մնում են երկրում, երկարաժամկետ քաղաքական լուծումների հասնելու առաջադրանքով: Բուշի վարչակազմը ձգտում էր Քլինթոնի նախագահական երդմնակալությունից առաջ (այսօր, 20 հունվարի) հեռանալ Սոմալիից, սակայն ըստ երեւույթին համաձայնություն է կայացել նրա եւ հաջորդ վարչակազմի միջեւ: Բուշի վարչակազմի ներկայացուցիչներն այժմ որեւէ ժամկետ չեն նշում ամերիկյան զինվորական ներկայության ավարտի համար:

Էսկոբարը բանտից սպառնում է

Փախուստի մեջ գտնվող «թմրադեղերի արքա» Էսկոբարը, որն անցյալ ամառ բանտից էր փախել, երդվել է շարունակել իր «շրջանակի» պայքարը Բոգոտայի իշխանությունների դեմ: Կոլումբիայի դատախազին ուղղված ձեռագիր նամակում նա ժխտում է իր անձնատուր լինելու հնարավորությունը:

Շեւարդնաձեն մեկնեց Իրան

Վրաստանի պատվիրակությունը հանրապետության ղեկավար Է. Շեւարդնաձեի գլխավորությամբ հունվարի 19-ին թռել է Թեհրան: Պատվիրակության կազմում է արտգործնախարար Ա. Չիկվաիձեն: Մեկնելուց առաջ կարճատեւ մամուլի ասուլիսի ընթացքում Է. Շեւարդնաձեն հայտարարել է, որ շատ հարցերում Վրաստանի եւ Իրանի «քաղաքական ու տնտեսական շահերը զուգադիպում են»: Այցի ժամանակ քննարկվելու է նաեւ Կովկասի կայունության խնդիրը: Երկօրյա այցի ընթացքում նախատեսվում է ստորագրել 10-ից ավելի փաստաթուղթ, մասնավորապես հուշագիր բարեկամական համագործակցության սկզբունքների մասին, համաձայնագիր երկու երկրների խորհրդարանների փոխգործողության, փաստաթղթեր առեւտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության, մշակութային, զբոսաշրջային կապերի մասին եւ այլն: ■

Ալմա-Աթա

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ-ՆԱԶԱՐԲԱԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ղազախստանը կուղարկի 200 հազար տոննա ցորեն

Ինչպես արդեն հաղորդել էինք, Ալմա-Աթայում սկսված երկօրյա հայ-ղազախական բանակցություններն ավարտվեցին համաձայնագրերի ստորագրմամբ: Մինչ այդ Հայաստանի նախագահը 45 րոպեանոց զրույց ունեցավ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի հետ, որի ընթացքում շոշափվեցին ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական հարցեր: Լրատվական գործակալությունների հաղորդման համաձայն, երկու նախագահները պայմանավորվել են, որ Ղազախստանը Հայաստան կուղարկի [illegible]ներ եւ 200 հազար տոննա ցորեն, թեեւ եղել էր 450 հազար տոննայի խնդրանք: Ըստ նրանց հայտարարության, ուղարկվող ապրանքների գները կճշտվեն նախարարությունների մակարդակով: Երեկ երկկողմ բանակցություններից հետո, վարչապետներ Խոսրով Հարությունյանն ու Սերգեյ Տերեշչենկոն ստորագրեցին 1993 թվականի առեւտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը, ինչպես նաեւ փաստաթղթեր ֆինանսական փոխհարաբերությունների մասին: Ըստ «Իտար-Տաս»-ի [illegible] նաեւ որոշում են ընդունել Ղազախստանում կառուցել կտորի եւ տրիկոտաժի վերամշակման հատուկ ձեռնարկություններ: Նազարբաեւի առաջարկությամբ, դրանք կաշխատեն ղազախական հումքով եւ հայկական սարքավորումներով:

Երեկ, ժամը 14.00-ին երկու երկրների նախագահներն անցկացրել են համատեղ ասուլիս, որի ժամանակ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարել է, թե ղազախ-հայկական ներկա բանակցությունները եւ ստորագրված համաձայնագրերը ապագայում ծառայելու հիմք կհանդիսանան ԱՊՀ շրջանակներում միավորման ընթացքների համար: Ըստ նրա, Ղազախստանը մեծ դեր կխաղա ԱՊՀ ապաինտեգրացիոն ընթացքների դադարեցման համար: Հայաստանի նախագահը նաեւ հույս հայտնեց, թե Ղազախստանը թեպետ չի լինի եւ բազմաթիվ [illegible] ցին-Նազարբաեւ առաքելությունը թեեւ ակնկալվող արդյունքը չտվեց, բայց ցույց տվեց, որ հակամարտությունների կարգավորման նման մեխանիզմը սկզբունքորեն հնարավոր է:

Լեւոն Տեր-Պետրոսյանը դրական գնահատական տվեց Տաշքենդում կայացած Միջինասիական պետությունների առաջնորդների հանդիպմանը, նշելով որ այն կկարգավորի տարածաշրջանային համագործակցությունը: Նա ցանկություն հայտնեց նաեւ, որ նման հանդիպում անցկացվի նաեւ Անդրկովկասում: Ըստ նրա, այդ հանդիպմանը կարող են մասնակցել Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը եւ Անդրկովկասի այլ պետություններ:

Իսկ նախագահ Նազարբաեւը ոչ միայն մխտեց Մինսկի հանդիպման ընթացքում ԱՊՀ բաժանման հնարավորությունները, այլեւ ընդգծեց, որ Ղազախստանը կստորագրի բոլոր փաստաթղթերը եւ կառաջարկի դրանց կատարման երաշխավորության համար ստեղծել ԱՊՀ [illegible]: ■

Պաշտօնական

Պիեռ Լելուշը՝ ժամանեց Երեւան

Ինչպես մեր թղթակցին հայտնեցին ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայությունում, երեկ ժամը 16-ին Երեւան ժամանեց Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի խորհրդական պրն. Պիեռ Լելուշը, 10 հոգանոց խմբի ուղեկցությամբ, այդ թվում նաեւ չորս լրագրողների։ Ծրագրվում է, որ պրն. Լելուշը կհանդիպի հանրապետության նախագահին եւ նրան կհանձնի Փարիզում Հայաստանի դեսպանության խորհրդանշական բանալին։ Նա կհանդիպի նաեւ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանի եւ այլ պետական-քաղաքական գործիչների հետ։

Վավերացվել են համաձայնագրերը

Ինչպես մեր թղթակցին տեղեկացրին Հայաստանի ԱԳՆ-ում, 1993 թ. հունվարի 14-ին ՀՀ նախագահը վավերացրել է մայիսի 27-ին Կահիրեում կնքված Հայաստանի եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունների միջեւ կնքված տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրերը։ Նախագահը վավերացրել է նաեւ Հայաստանի եւ Սիրիայի միջեւ կնքված առեւտրատնտեսական համաձայնագիրը։

Ժամանակավոր հավատարմատարներ մերձավոր արտասահմանում

Հունվարի 19-ին կայացած բրիֆինգում Հայաստանի արտգործնախարարության մամուլի ծառայության ղեկավար Նելլի Մաթեւոսյանը հաղորդեց, թե նշանակվել են հանրապետության ժամանակավոր հավատարմատարներ Ղազախստանում Արման Մելիքյան, Վրաստանում Լեւոն Խաչատրյան, Ուկրաինայում Հրաչյա Սիլվանյան։ Արման Մելիքյանը հունվարի 18-ին Հայաստանի պետական պատվիրակության կազմում արդեն մեկնել է Ալմա-Աթա, իսկ Լեւոն Խաչատրյանը նույն օրը Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեին է հանձնել իր հավատարմագիրը։

Հայաստան-Ղրղզստան

Հայաստանի արտգործնախարարության մամուլի կենտրոնից հայտնեցին, թե նոտաների փոխանակման միջոցով դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Ղրղզստանի եւ Հայաստանի միջեւ։

Հայաստան-Սուդան

Ինչպես մեր թղթակցին հայտնեցին Հայաստանի ԱԳՆ մամուլի կենտրոնում, 1992 թ. դեկտեմբերի 8-ի ամսաթվով նոտաների փոխանակմամբ դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Հայաստանի եւ Սուդանի միջեւ։

Ստավրոպոլում 30 հարբած դեսանտայիններ կռվել են զինվորական պարեկի եւ միլիցիայի հետ։ 30 հարբած դեսանտայիններ Ստավրոպոլի շինարարական տեխնիկումի հանրակացարանի դիսկոտեկում ծեծկռտուք են սարքել զինվորական պարեկների եւ միլիցիայի աշխատակիցների հետ։ Զինվորական դատախազությունը Ստավրոպոլում տեղակայված դեսանտային բրիգադի հրամանատարության աջակցությամբ սկսել է այդ դեպքի հետաքննությունը։

ԳԽ

6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԿՍԿՍՎԻ ՓԵՏՐՎԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հանրապետության բնակչությունը օրենսդիր իշխանությունից, մեղմ ասած, այնքան էլ գոհ չէ, թեեւ ընտրություններից հետո բավականին ժամանակ է անցել, սակայն այդպես էլ «կյանքի ուղեգիր» չեն ստացել իրավական, տնտեսական եւ սոցիալական բազմաթիվ հարցերի կարգավորմանը կոչված տարաբնույթ շատ օրենքներ եւ որոշումներ։

Եւ այնուամենայնիվ հույսը, որ հաջորդ անգամ պատգամավորներն ավելի արդյունավետ եւ բեղմնավոր կաշխատեն, չի լքում մեզանից շատերին։

Որպեսզի տեղեկանանք, թե մոտակա ժամանակներս սկսվելիք ՀՀ Գերագույն խորհրդի 6-րդ նստաշրջանի աշխատանքների բարելավման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել, դիմեցինք ՀՀ Գերագույն խորհրդի քարտուղար, ՀՌԱԿ խմբակցության անդամ Վարազդատ Ավոյանին։

– Թեեւ ՀՀ ԳԽ 5-րդ նստաշրջանի ավարտից հետո պատգամավորներն արձակուրդ ստացան, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունն անընդհատ գործել է։ Եւ հիմնականում զբաղվել է խորհրդարանի 6-րդ նստաշրջանի նախապատրաստման աշխատանքներով։

Հիմնական ուշադրությունը դարձվում է օրակարգի ձեւավորման կարգին։ Բանն այն է, որ նախորդ նստաշրջանների քննարկման համար նախատեսված օրենքների եւ որոշումների ցանկը կազմելիս շատ դեպքերում հաշվի չի առնվել դրանց լիարժեք փորձաքննություն չանցնելու հանգամանքը։ Միաժամանակ չի կատարվել նաեւ առաջնահերթ օրինագծերի դասակարգում։ Հասկանալի է, բոլոր օրենքներն էլ կարեւոր են, սակայն նկատի ունենալով, որ խորհրդարանն անգամ ամենաարդյունավետ կերպով աշխատելու դեպքում ի վիճակի չէ մեկ նստաշրջանում Հայաստանի ներքին եւ արտաքին կյանքը կարգավորող հարյուրավոր անհրաժեշտ օրենքներ ընդունել, բնականաբար դրանց տարբերակումը դառնում է օրախնդիր հարց։

Այժմ նախագահությունը հանձնաժողովների հետ համատեղ այս գործին է լծված։

Հինգերորդ նստաշրջանի վերջին նիստում որոշում ընդունվեց Գերագույն խորհրդի բարեփոխման ծրագրի նախագիծ մշակելու նպատակով ժամանակավոր հանձնաժողով ստեղծել։ ԳԽ նախագահությունը կատարել է այդ հանձնարարությունը եւ հանձնաժողովն արդեն պատրաստել է այնպիսի մի տարբերակ, որը, կարծում եմ, ընդունելի կլինի պատգամավորների գերակշիռ մասի համար։ Նախատեսվում է 6-րդ նստաշրջանն սկսել այդ նախագծի քննարկմամբ եւ ընդունմամբ, ինչը, վստահ եմ, զգալիորեն կբարձրացնի խորհրդարանի օգտակար գործողության գործակիցը։ Թեեւ որոշակի չլուծված խնդիրներ են մնում, հատկապես հեռավոր շրջաններից ընտրված պատգամավորների նիստերին մասնակցելու սոցիալական դժվարությունները հաղթահարելու հարցում (ինչպես գիտեք, միջքաղաքային ավտոբուսներն անկանոն են երթեւեկում, գործուղման ծախսերը քիչ են նախատեսված եւ այլն), սակայն այս ուղղությամբ նույնպես մտածում ենք...

Իսկ մինչ այդ, ինչպես հայտնի է, խորհրդարանը կհավաքվի արտահերթ նիստի՝ կառավարության խնդրանքով հետաձգված 1993 թվականի սոցիալ-տնտեսական ծրագիրը եւ պետական բյուջեն քննարկելու համար։

ՀՌԱՆՏ ՊՈՂՈՍՅԱՆ

[illegible]

Գնամ, բերեմ, ծառը կտրեմ

Ծառահատում։ Այս նոր աղետի առաջն առնելու նպատակով շրջակա միջավայրի եւ բնության պահպանության նախարարությունը հունվարի 19-ին խորհրդակցություն էր հրավիրել, որին մասնակցում էին քաղաքի գլխավոր դենդրոլոգը, քաղաքի կանաչապատման վարչության, անտառտնտեսության տնօրենները, ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը, Շահումյանի շրջխորհրդի նախագահը եւ այլն։ Խորհրդակցությունում նշվեց, որ ժամանակին բոլոր կազմակերպությունների կողմից այսօրվա վիճակը կանխատեսվել է եւ կառավարությանը ահազանգվել։ Բայց ոչ միայն հանրապետություն վառելիք չի բերվել, այլեւ տեղում հնարավոր ոչինչ չի արվել, մասնավորապես կառավարությունը ոչինչով չի ընդառաջել ծառահատում կազմակերպելուն եւ վառելափայտ կուտակելուն։ Սակայն անցածն այլեւս ետ չես բերի։ Այժմ ժամանակն է հետեւանքների մասին մտածել, այսօր հնարավոր ամեն ինչ անել։ Նախ պետք է խիստ հսկողություն սահմանել (զինված), խստացնել պատժամիջոցները։ Բայց այդ բոլորը ոչ մի արդյունք չեն տա, որովհետեւ հետեւանքների դեմ պայքարելն անօգուտ է, անհրաժեշտ է պատճառները վերացնել։ Անհրաժեշտ է կանոնակարգել ծառահատումները՝ վառելափայտի հայթայթումը օրինականացնելով։ Այսինքն, ներկաների համատեղ եզրակացությունն այն էր, որ ձմեռային ծառահատումները (սանիտարական հատում, կոճղ) վնասակար չեն, երբ գրագետ ու մասնագիտորեն կատարվեն։ Դրա համար որոշվեց, որ բնակչությանը լրացուցիչ կհաղորդվեն կանաչապատման տեղամասերի հեռախոսահամարները, որոնց միջոցով կարելի է իմանալ, թե որտեղ եւ ինչպես կատարել հատումը։ ■

ԱԳՆ

Հայաստանի դիվանագետները Հաագայի միջազգային սեմինարում

Ինչպես մեր թղթակցին հայտնեց Հայաստանի ԱԳՆ ռազմաքաղաքական բաժնի երկրորդ քարտուղար Աշոտ Քոչարյանը, ինքը եւ արտգործնախարարության միջազգային տնտեսական կազմակերպությունների բաժնի երկրորդ քարտուղար Կարեն Շահինազարյանը 1992 թվականի նոյեմբերի 5-ից մինչեւ դեկտեմբերի 18-ը մասնակցել են Նիդեռլանդների Հաագա քաղաքի «Քլինգենդալ» միջազգային հարաբերությունների ինստիտուտում անցկացվող երիտասարդ դիվանագետների սեմինարին, որին մասնակցել են նախկին Խ. Միության 9 հանրապետությունների եւ Սլովենիայի ներկայացուցիչները։

Դասախոսությունները նվիրված էին մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, եվրոպական կազմակերպությունների ներքին ու արտաքին հարաբերությունների զարգացման փուլերին, 90-ական թվականներին միջազգային համագործակցության ու անվտանգության հարցերին, միջազգային հարաբերությունների տեսությանը, Գերմանիայի վերամիավորումից հետո Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Նիդեռլանդների արտաքին քաղաքականությանը։

Սեմինարի մասնակիցները եղել են Մաաստրիխտում, որ քննարկվող թեմաները նվիրված էին Մաաստրիխտի պայմանագրի վավերացմանը, եվրոպայի ինտեգրացման գործընթացներին, մայրցամաքում ընդհանուր վալյուտային համակարգի ստեղծմանը, պայմանագրի վավերացման հարցում Անգլիայի ու Դանիայի դիրքորոշմանը։

Սեմինարի հիմնական նպատակն էր դիվանագիտական աշխատանքի համար մասնագետների պատրաստումը մոտակա ժամանակներում Արեւմտյան Եվրոպայի երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հեռանկարի հաշվառումով։

Նպատակներից մեկն էլ այն էր, որ սեմինարի մասնակիցները ծանոթանան եվրոպական մտածելակերպին բնորոշ հատկություններին, բանակցությունների ընթացքում դիվանագետին անհրաժեշտ հատկանիշներին, դրական արդյունքների հասնելու միջոցների եւ հնարքների, հոգեբանական գործոնների վերլուծությանն ու բնութագրմանը։ Հանդիպումներից մեկի ժամանակ հայ դիվանագետները ներկայացրել են Հայաստանի էներգետիկ ճգնաժամը, որի առթիվ նշվել է, որ երբ Հայաստանն ստորագրի եվրոպական խարտիան, ապա պատժամիջոցներ կկիրառվեն հանրապետությունը շրջափակողների դեմ։ Սեմինարի օրերին հայ դիվանագետները հանդիպումներ են ունեցել նաեւ Հաագայի փոքրաթիվ հայ համայնքի հետ, մասնակցել նրանց կազմակերպած միջոցառումներին։

Ա. Գ.

Երեւան

Ո՞վ կլինի գործկոմում

Հունվարի 19-ի Երքաղխորհրդի նիստը նվիրված էր նախագահի առաջադրած գործկոմի անդամների 15 թեկնածուների քննարկմանը։ Ներկայացված թեկնածուները (որոնց մեր նախորդ համարում ներկայացրել էինք, բաց էր թողնված միայն նախագահի տեղակալի թեկնածու Հրաչ Թորոսյանի անունը) հունվարի 19-ի նիստի ընթացքում ելույթներ էին ունենում։ Նրանց մի մասը նոր չէին եւ առաջին անգամը չէին հանդես գալիս խորհրդի առաջ։ Ուստի քննարկումն ընթանում էր հանդարտ, նախապես կազմված սցենարով։ Կարծում ենք, որ ընտրությունների ժամանակ եւս անակնկալներ չեն լինի, քանի որ դահլիճի տրամադրվածությունից կարելի է եզրակացնել, որ քաղաքը շուտով կունենա իր գործադիր իշխանության համապատասխան օղակը։ Իսկ թե դա ինչ փոփոխություններ կբերի երեւանցիների կյանքում, ցույց կտա ապագան։

Ա. Օ.

Շրջանային զինկոմիսարիատի տեղեկանքը Երեւանի երիտասարդ գործարարների համար վարկեր ստանալու բանկի յուրօրինակ անցագիր է դարձել։ Վարկ ստանալուց առաջ նրանցից յուրաքանչյուրը պետք է ապացուցի, որ ինքը չի խուսափում ծառայությունից եւ դրանով իսկ փող շահելու լիակատար իրավունք ունի։

«Մենք այդ քայլին դիմեցինք հարկադրաբար, քանի որ հաճախ մեզ դիմում են նորահայտ գործարարներ, որոնց առեւտրային «օրինավորությունը» խիստ կասկածելի է», «Սնարք»-ի թղթակցին ասաց Հայաստանի Արդշինբանկի վարչության փոխնախագահ Գագիկ Սահակյանը։ Նրա խոսքերով, բանկում երկարացված պարտքերի թիվն աճում է եւ առ այսօր հասել է 300 մլն ռուբլու։

Ռազմագերիների հարցով հայ-ադրբեջանական հանդիպումն անցկացնել Թբիլիսիում

Բաքուն շարունակում է պնդել, որ [illegible] ռազմագերիների փոխանակության հարցերով հայ-ադրբեջանական բանակցություններն անցկացվեն Թբիլիսիում, «ԻՖ»-ին հայտնել է Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնի ղեկավար Արմեն Դոլյանը։ «Մենք դրան էլ համաձայնեցինք, բայց չկան երաշխիքներ, որ հանդիպումը կկայանա Թբիլիսիում, քանի որ ադրբեջանական կողմն անընդհատ առաջ է քաշում չպատճառաբանված պայմաններ», նշեց նա։ Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչների հանդիպումը պետք է կայանար Ադրբեջանի Ղազախի շրջանում հունվարի 12-ին։ Բաքուն դրա չկայանալու համար մեղադրեց Հայաստանին։ Դոլյանի խոսքերով, հանդիպումը հետաձգվել է Թբիլիսիում անցկացնելու Հայաստանի անպատրաստության պատճառով։

Նախիջեւանն առանց վառելիքի ու մթերքի

Իրադրությունը Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում ծանր է, շարունակվում է վառելիքաէներգետիկ եւ մթերային ճգնաժամը, «ԻՖ»-ին հայտնել է Նախիջեւանի Գերագույն մեջլիսի նախագահ Հեյդար Ալիեւը։ Նրա խոսքերով, ճգնաժամը Հայաստանի կողմից ինքնավարության շրջափակումն է, որի տարածքով է անցնում Նախիջեւանն Ադրբեջանին կապող միակ երկաթուղին։ Ալիեւը հայտնել է, թե հանրապետությունում կանգ է առել ամբողջ արդյունաբերությունը։ Մթերքի դեֆիցիտը հաջողվում է մեղմել Թուրքիայից եւ Իրանից ստացվող մարդասիրական օգնությունների հաշվին։

Վարչապետ Հուսեյնովի պահանջը

Ադրբեջանի վարչապետ Ռահիմ Հուսեյնովը պահանջել է Ռուսաստանի հետ առեւտրատնտեսական համաձայնագրի նախապատրաստումն ավարտել մինչեւ 1993 թ. փետրվարի 1-ը։ Դրա փութացման անհրաժեշտությունը մասամբ կապված է այն բանի հետ, որ Ռուսաստանի կառավարությունը մտադիր է փետրվարի 1-ից կիրառել 65 տոկոս մաքսատուրք եւ Ադրբեջանի հետ առեւտրի հատուկ ռեժիմ։ Այդպիսով մաքսատուրք կդրվի միայն ռազմավարական ապրանքների վրա։ Ռուսական կողմը հայտարարել է նաեւ անտուրք ապրանքների ցանկն ընդլայնելու պատրաստակամության մասին։

ՆՏ

Էլչիբեյի հաշվարկների մասին հրամանագիրը

Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հրամանագիր է հրապարակել հանրապետությունում հաշվարկների կարգավորման մասին։ Ազգային բանկին հանձնարարվում է 15 օրում համապատասխան առեւտրային բանկերի հետ պարզել չվճարված, բայց նախկին միության ձեռնարկություններ առաքված ապրանքների արժեքը։ Բանկերին հանձնարարվում է պարտքի վճարման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,5 տոկոս տույժ հաշվարկել եւ այդ գումարները փոխանցել հանրապետության բյուջե։ Սահմանվում է պարտքերի վերադարձման 60-օրյա ժամկետ։ Ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարներին հանձնարարվում է հանրապետությունից դուրս ապրանք չառաքել առանց նախնական վճարման։ ■

[illegible]

Գործող դպրոցները

ԼՂՀ ժողովրդական կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Բահաթուր Դավթյանը «Նոյյան տապան» գործակալության թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ հաղորդել է, որ նախատեսված 5 դպրոցներից 1992 թվի նոյեմբերի 1-ից Շուշի քաղաքում գործում է 1 հայկական դպրոց։ Ընդամենը դպրոցում սովորում է 180 աշակերտ։ Շուշիում գործում է նաեւ Նիկոլ Աղբալյանի անվան գիմնազիան, որտեղ սովորում է մոտ 50 աշակերտ։ Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի միջնակարգ դպրոցում սովորում է 125 աշակերտ, Բերդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում ուսուցանվում են աշակերտներ հարեւան փոքր գյուղերից։ ԼՂՀ ժողովրդական կրթության նախարարի հրամանով սույն թվի հունվարի 1-ից արդեն բացվել է ութամյա դպրոց փախստական երեխաների համար։ Դպրոցը, ինչպես եւ ԼՂՀ այլ դպրոցները, ապահովված է դասագրքերով, դպրոցական պիտույքներով, ինչը չի կարելի ասել դպրոցական շենքերի մասին, որոնց բացակայությունը բացասաբար է անդրադառնում ուսուցման ընթացքի վրա։

ՆՏ

ԾԱՌ ՀԱՏԵԼ, ԹԵ՞ ԾԱՌ ՏՆԿԵԼ

Երեկ, հունվարի 19-ին, լուսավորության նախարար Հայկ Ղազարյանը խորհրդակցություն էր հրավիրել առաջիկա գարնանային ծառատունկի կապակցությամբ: Ներկա էին բնության պահպանության, գյուղատնտեսության նախարարությունների, անտառտնտեսության, Երևանի քաղխորհրդի կանաչապատման վարչության, կանաչների, Գերագույն խորհրդի կրթության հանձնաժողովի և մամուլի ներկայացուցիչները: Խորհրդակցության հրավիրման նպատակը Հայաստանի կանաչ գոտիներում այս տարվա ընթացքում կատարված բարբարոսական ծառահատումների հետևանքները վերացնելն էր: Եվ քանի որ հանրապետության բնակչության ամենամեծ և ամենաշահագրգիռ հատվածը կրթության համակարգի աշխատողներն ու նրանց սաներն են, նախաձեռնությունն իր վրա էր վերցրել լուսավորության նախարարությունը:

Խոսակցությունը խիստ գործնական էր և հստակ նաև, արդյունավետ: Նրանք արձանագրեցին, որ Հայաստանում անսահմանափակ քանակով տնկիներ կան, միայն պտղատու տնկիների քանակը 530 հազար է: Սակայն այս փաստով խնդիրները չեն սպառվում: Դրանց թվարկումն անգամ Հայաստանն առանց ծառ տեսնելու հուսահատությունն է առաջացնում:

Բացի ֆինանսական դժվարություններից, ներկաները նշեցին մեխանիզմների, գործիքների (բահ, ֆլանգ), վառելիքի, ոռոգման խնդիրների մասին: Ինչ վերաբերում է տնկիների քանակին, ըստ նախարար Հայկ Ղազարյանի, անհրաժեշտ է մեկ միլիոն ծառ: Սակայն պարզվեց, որ նախկին կանաչ տարածքը վերականգնելու համար մեկ միլիոնը բավական չէ: Առաջարկվեց կանաչ անտառաշերտերի ջոկատներ ստեղծել դպրոցականներից, որոնք կզբաղվեն ծառերի տնկմամբ և խնամքով:

Դրա համար նախ անհրաժեշտ է Հայաստանի ծառատնկման քարտեզ ստեղծել, հաշվարկել, թե ինչ և որքան է անհրաժեշտ: Այդ մեկամսյա ժամանակամիջոցում անհրաժեշտ է ամեն ինչ կուտակել և հանրապետության բոլոր շրջաններում կազմակերպչական աշխատանք տանել:

Ծառատնկումն անհրաժեշտ է հատկապես քաղաքներում, բայց ծառահատումներ են կատարվել նաև անտառային գոտիներում, որոնց վերականգնման կարիք նույնպես կա: Նշվեց նաև մեկ այլ խնդիր. հատված ծառերի կոճղերի հարցը: Եթե նոր ծառերի համար դրանք չհանվեն, մատղաշները չեն կպչի: Անտառային գոտիներում ծառատնկումը պետք է սկսել դեռ ձյունը չհալած, իսկ քաղաքներում վաղ գարնանը, 15-20 օրում և ժամանակ չկորցնելու համար այսօր արդեն պետք է գործել: Նշվեց նաև ծառերի տարիքը պահպանելու, հողի որակը հաշվի առնելու, տեղ-տեղ գոմաղբ օգտագործելու անհրաժեշտության մասին: Սակայն ծառ աճեցնելը տնկելով չի ավարտվում, անհրաժեշտ է խնամել, ոռոգել: Իսկ ոռոգման համակարգը ևս հովհարային անջատումներով է գործում: Ուստի լավ գործը միայն լավ սկիզբ չէ, այլ երկարատև և տևական աշխատանք, որ լուսավորության նախարարությունն ստիպված կլինի այսուհետ ևս կատարել:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Միայն գազի մատակարարումը կփրկի ծառերը

«Նոյյան տապան» գործակալության թղթակցի հարցերին պատասխանում է բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարար **Կարինե Դանիելյանը**:

– Հանրապետության անտառների պահպանումը մնում է «Հայանտառ» անտառտնտեսական արտադրական միավորման, ճանապարհամերձ ծառերի պահպանումը՝ տրանսպորտի նախարարության, քաղաքի ծառերի պահպանումը՝ տեղական խորհուրդների պարտականությունների մեջ: Բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարության պարտականությունը միայն այդ աշխատանքների վրա վերահսկողություն իրականացնելն է: Երբ սկսվեցին ծառերի անխնա ջարդերը, մենք ուժեր հատկացրինք Երևան քաղաքի ծառերը պահպանելու համար: Բայց նախ ուժերն էին անբավարար ամբողջ քաղաքի ծառերը հսկելու համար, երկրորդ՝ մեր աշխատակիցներին հաճախ սպառնացել են զենքով ու երրորդ, ծառերն սկսեցին կտրել գիշերը, որն արգելել գործնականում անհնար է: Մենք բազմիցս հայտարարեցինք, որ փայտի խիստ կարիք ունեցողները կարող են դիմել Կանաչապատման վարչություն, որտեղ նրանց ցույց կտան, թե որտեղ կարելի է ծառ կտրել, սակայն դա նույնպես որոշակի արդյունքների չբերեց: Ի վերջո, Երևանի քաղխորհրդի գործկոմը որոշում ընդունեց թույլատրել կատարել վերին էտ, բայց ծառն արմատից չկտրել: Դա լավ որոշում էր, քանի որ ձմեռային էտը ծառերի հետագա կյանքի համար այնքան էլ վտանգավոր չէ, բացի այդ, միևնույն է, ուրիշ ելք չկար:

Նախարարի խոսքը լրացնում է բնության և շրջակա միջավայրի հանրապետական տեսչության պետ **Լյուդվիգ Նազարյանը**.

– Սակայն այդ որոշումն էլ չի փրկում դրությունը. եթե մեկը վերին էտ է կատարում, մյուսը ծառը արմատից է կտրում: Այդ երևույթն ամբողջ հանրապետությունով մեկ զանգվածային բնույթ է կրում: Ծառերի ապօրինի հատումները դադարեցնելու նպատակով համապատասխան օգնության խնդրանքով դիմել ենք և կառավարությանը, և ներքին գործերի նախարարությանը. գուցե ոստիկանի համազգեստն իր ազդեցությունն ունենա: Ինչևէ, գրեթե միակ փրկությունն ազգաբնակչության կենցաղային կարիքների համար հանրապետությունում գազամատակարարման վերականգնումն է:

ԱՐՄԵՆ ԱՍԻՐԽԱՆՅԱՆ

Լուրեր

Ադրբեջանը «հոգնածության» նշաններ է ցույց տալիս

Հաճախ են փոխվում «Ազատություն» ռադիոկայանի Բաքվի թղթակիցները: Արդեն եթերում չեն հնչում ոչ Իլյա Բախշիարովյան, ոչ Ազեր Հուսեյնովը և ոչ էլ մյուսները: Հունվարի 18-ին նոր թղթակից հանդես եկավ Բաքվից, որը ջանում էր տարբերվել նախորդներից՝ «փաստերի ճշմարտացիությամբ», «օբյեկտիվությամբ», «համարձակությամբ»:

Իրոք, թղթակցի ելույթը զուրկ չէր արժեքից: ելույթում առաջին անգամ հրապարակվեցին նոր տվյալներ Ղարաբաղի և հայ-ադրբեջանական սահմանում տարվող կռիվների մասին: Ադրբեջանի պաշտոնական աղբյուրների համաձայն, ղարաբաղյան ռազմաճակատում ադրբեջանցիները տվել են 6000-ից ավելի կորուստ, երեք անգամ ավելի վիրավոր, մի քանի հարյուր գերիներ, մի քանի հազար անհետ կորածներ, միլիարդի ռազմական և նյութական արժեք:

Թղթակիցը շտապեց նշել, որ հայերն ավելի շատ կորուստներ ունեն օդուժի գծով, հակառակ որ Հայաստանի և Ղարաբաղի Հանրապետությունների պաշտպանության նախարարությունները հայտարարել են, թե իրենք Ադրբեջանի դեմ օդուժ չեն օգտագործում:

Թղթակցի հաղորդման մեջ սողաց, թե Ադրբեջանն այնուամենայնիվ ստիպված է լինում օդուժ կիրառել: Սակայն մինչև ե՞րբ, հարց է տալիս նա և իր արտահայտում ադրբեջանական ժողովրդի և ղեկավարության կարծիքը, թե «հոգնել են» պատերազմելուց, կորուստները շատ-շատ են և «միայն հայերն են մեղավոր», որ շարունակվում է հայ-ադրբեջանական կռիվը:

Նրա ասելով, Բաքվում գործարանների մի մասը չի աշխատում, որի պատճառով, անցյալ տարվա համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի մակարդակն իջել է 50 տոկոսով: Չեն կատարվում պայմանագրային պարտավորությունները, արտադրանքի որակը շատ ցածր է, հազարավոր մարդիկ գործազուրկ են: Թղթակիցը դրանց պատճառը փնտրում է առաջին հերթին ռազմական ծախսերին մեծ գումարներ հատկացնելու մեջ:

Այո՛, ժողովուրդը հոգնել է անիմաստ, անհաջողակ ղարաբաղյան պատերազմից, նշում է Բաքվի ներկայացուցիչը: Ո՞վ է մեղավոր: Եվ նա կրկին ու կրկին մեղքը բարդում է լոկ հայերի վրա:

Ադրբեջանցի թղթակիցը միաժամանակ փորձում է հանրապետության ղեկավարներին արդարացնել ժողովրդի վատ վիճակի համար: Ըստ նրա, պատճառը ոչ միայն պատերազմն է, այլ նաև երրորդ մի ուժ (անունը չի նշում), որը ձգտում է Ադրբեջանին հետ քաշել իր հիմնական խնդիրների լուծումից: Նա բողոքում է, որ չեն կենսագործվում կանխագծումները, մեջլիսի որոշումները և այդ բանում մեծ մեղք ունեն իրավապահ մարմինները:

«Ազատություն» ռադիոկայանի Ադրբեջանի նոր թղթակցի այդ օրվա հաղորդումը շատ բանով տարբերվեց իր նախորդների նյութերից. այստեղ շատ բան ճշմարտանման էր, նա փորձում է ցույց տալ իրական պատկերը, բացատրել պատճառները:

Նա նույնիսկ մեջբերում կատարեց երկու ադրբեջանցի գերիներից՝ Զեյնալովից և Մամեդովից, որոնք ևս արտահայտվում են ղարաբաղյան պատերազմին վերջ տալու օգտին:

ՍՄԲԱՏ ԱՎԱԳՅԱՆ

Կարճ

Ոչ մի կտոր փայտ Հայաստան չի մտել

«Հայանտառ» տարածքային միավորման փոխտնօրեն Լևոն Հակոբյանը հաղորդեց, որ հանրապետության փայտամշակման և անտառարդյունաբերության համակարգի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է 500 հազ. խորանարդ մետր փայտ: Հայաստանում հնարավոր է միայն չնչին սանիտարական հատումներ կատարել, որոնք արտադրության համար գրեթե պիտանի չեն: Նախկինում այդ կես միլիոն խորանարդ մետրը մենք կանոնավոր ստանում էինք մեր հիմնական մատակարարից՝ Ռուսաստանից, սակայն շրջափակման սկսվելու օրից հումքն ստացել ենք մեծ ընդհատումներով, իսկ վերջին 2-3 ամսում ընդհանրապես ոչինչ չենք ստացել և համակարգի գրեթե ոչ մի գործարան չի աշխատում, գործողներն էլ բեռնված են: Ինչպես հայտնի է, անտառանյութը փոխադրելի է միայն երկաթուղային ճանապարհով, և համակարգի գործունեության համար անհրաժեշտ բոլոր հումքատեսակներով լի հարյուրավոր վագոններ կորել են մեր երկու հարևան հանրապետություններում:

ՆՏ

Ֆրանսիական «Համագործակցություն Հայաստան» բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ Գորիսում ստեղծվել է բարեգործական ճաշարան: «Սկզբնապես մեզ տրամադրվել է 600 դոլլար, ասում է կազմակերպության անդամ Աշոտ Սուքիասյանը: Դրանով գնվում է սնունդ, պատրաստվում են տնական ճաշեր: Դրանցից հիմնականում օգտվում են միայնակ ծերերը: Սպասարկել ենք արդեն 150 հոգու: Օրվա մեջ մեզ մոտ ճաշում են 20-30 հոգի»:

Հ. Բ.

Անդրադարձ

Հենրիկ Իգիթյանը ճշտումներ է անում

Հունվարի 8-ի մեր համարում տպագրել էինք Փարիզում մեր սեփական թղթակից Րաֆֆի Հերմոն Արախի ուղարկած թղթակցությունը «Ալեքսանդր Մուսայելյանը նվաճում է ֆրանսահայերի սիրտը» վերնագրով: Այնտեղ պատմվում է Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի փոխտնօրենի ծավալած ցուցահանդեսային բուռն գործունեության, նրա «անմիջական-դիվանագիտական ելույթների» մասին՝ ի նպաստ իրենց կենտրոնի գոյատևման և հետագա բարգավաճման: Ինչպես տեղեկացրել էր մեր սեփական թղթակիցն իր հիշյալ հոդվածում, հայ արվեստի այս «մշակն ու քարոզիչը» Ֆրանսիայի տարբեր քաղաքներում ունեցած իր բացատրական աշխատանքներում և ելույթներում մշտապես տագնապ է հնչեցնում, թե «Հայաստանի դժվարությունները սպառնում են փակել այդ կարևոր կենտրոնը», ուստի ինքը բոլոր բարերարներից դրամ է հավաքում այդ տագնապը մեղմելու համար:

Հոդվածը տպագրվելուց մի քանի օր անց վրդովված խմբագրություն զանգահարեց Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի տնօրեն Հենրիկ Իգիթյանը և ուզեց պարզաբանումներ անել: Նախ, ինչպես հայտնեց նա, իրենք հիմնականում այս հոդվածից են իմանում իրենց նախկին աշխատակցի ծավալած նման «հայրենասիրական առաքելության» մասին: Ապա մեզ ցույց տվեց պրն. Ալեքսանդր Մուսայելյանի հունիսի 12-ի թվակիր դիմումն աշխատանքից ազատվելու վերաբերյալ: Դրանից հետևում է, թե ինչպես և ինչու է նա մեկնել Ֆրանսիա, իրենց հայտնի չէ: Ալ. Մուսայելյանը, ասաց պրն. Հենրիկ Իգիթյանը, մեծագույն ցանկության դեպքում հունիսի 12-ից հետո այլևս իրավասու չէ ներկայացնելու ո՛չ այս կենտրոնը, ո՛չ էլ մանկական ստեղծագործության որևէ հաստատություն ընդհանրապես: Թե ինչու է այս հանգամանքի մասին լռել և փաստորեն Փարիզի մեր թղթակցին թյուրիմացության մեջ գցել պրն. Մուսայելյանը, դեռևս պարզ չէ:

Հանդիպեցինք նաև հոդվածում հիշատակված նկարիչ, կենտրոնի մանկավարժ Կարեն Գասպարյանին: Պարզվեց, որ նա անցյալ տարվա հունիսին մեկնել է Ֆրանսիա ոչ թե մանկավարժների ինչ-որ խմբի կազմում, այլ պարզապես անհատական հրավերով՝ տանելով իր ցուցահանդեսը: Նա ևս տարակուսանք արտահայտեց մեր հայրենակցի գործունեության մասին:

Կենտրոնի տնօրեն Հ. Իգիթյանի և փոխտնօրեն Գ. Սուքիասյանից տեղեկացանք նրանց ղեկավարած հաստատության ֆինանսական դժվարությունների և Ա. Մուսայելյանի՝ ամեն տեղ հայտնած դրա փակվելու վտանգի մասին: Իրականում նրանք երբեք էլ դժգոհ չեն եղել կառավարության կողմից իրենց հաստատության հանդեպ եղած հոգածությունից: Ավելին, առաջիկայում նախատեսվում է ստեղծել Ակադեմիա, նոր մասնաճյուղ բացել Շուշիում: Իհարկե, այս դժվարագույն ժամանակներում իրենք չեն հրաժարվում նաև բարերարների աջակցությունից: Ուստի պաշտոնական նամակ են գրել Փարիզի հայկական միջնակարգ դպրոցի՝ «Դպրոցասեր»-ի տնօրեն պրն. Կարապետ Դաքեսյանին, որում կանխավ շնորհակալություն հայտնելով ի նպաստ իրենց կենտրոնի նրա ցուցաբերած ջանքերի համար, միաժամանակ խնդրում են այդ ազգօգուտ գործը չկատարել պատահական մարդկանց միջոցով:

Պրն. Իգիթյանի ցուրտ առանձնասենյակ մտնող կենտրոնի մյուս աշխատակիցները խնդրեցին մեր թերթի միջոցով հորդորելու իրենց նախկին գործընկերոջը վերադառնալ հայրենիք և իր նմանատիպ ելույթներով ջերմացնել նաև իրենց սրտերը:

Այս անուրախ պատմությունը լսելուց հետո հիշում ես երջանկահիշատակ Օստապ Իբրահիմովիչին, լեյտենանտ Շմիդտի զավակներին և մտածում, թե նմանները մեր տխուր օրերում, ցավոք, շատացել են: Հոլովելով երկրաշարժի զոհերի հիշատակը, շահարկելով ստեղծագործող երեխաների մշուշոտ ապագան նրանք այստեղ-այնտեղ հանգանակություններ են կատարում, շարժում ազնիվ մարդկանց գութը, ապա հավաքած գումարը ծախսում աստված գիտի թե ինչ նպատակներով, վարկաբեկելով ոչ միայն իրենց, այլև Հայաստանին:

Լ. Լ.

Կարճ

Հայաստանը դեղորայք է գնում

Հայաստանին եվրոպական միության տված 38 մլն էկյուից 2 միլիոնը կհատկացվի դեղորայքի գնմանը: Այդ մասին «Սնարք»-ի թղթակցին հայտնեց «Արմենինտորգ» կառավարական ընկերակցության գլխավոր տնօրեն Արմեն Դարբինյանը: Առ այսօր, ասաց նա, արդեն 13 պայմանագիր է ստորագրվել Արևմտյան Եվրոպայի խոշորագույն դեղագործական ֆիրմաների հետ: Մարտ ամսից դեղորայքը կպահեստավորվի Պրագայի օդանավակայանում և չարտերային ուղերթներով կհասցվի Երևան: ■

Բուժում առանց դեղամիջոցների

Էքստրասենս Ա. Ա. Պետրոսյանը բուժում է կակազող, էնուրեզով (գիշերամիզություն), պերիոդիկ (երևանյան) հիվանդությամբ տառապող երեխաների:

Հասցեն՝ Երևան, Երկաթգծի կլինիկական հիվանդանոց, 5-րդ հարկ, 518 սենյակ:

Ընդունելությունն ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից)
ժամը 11:00-13:00
Հեռախոս՝ 45-60-34

Վաճառվում են կահավորված տնակներ: Մակերեսը 30 ք. մ.: Հեռ. 26-34-92

Ամփոփ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հուսահատությունն է պատել մեր քաղաքական մեկնաբանին, եւ ոչ միայն նրան: Երկրում տիրող ծանրագույն վիճակը, քաղաքական, տնտեսական եւ ընկերային ազդու քայլերի բացակայությունը, վարչախմբի ներսում առկա աղակայությունն ու այլասերվածությունը ծնունդ են տվել նման հուսահատական եւ արմատական մտորումների, որոնք մեր հոդվածագրի պարագայում գոնե զսպանակվում են ավելի մեծ վտանգների մտավախությամբ՝ քան հեղափոխությունն է: Այսուհանդերձ, հարկ ենք համարում հիշեցնել, որ մենք ոչ միայն չենք բաժանում, այլեւ հիմնովին դեմ ենք, դավանանքով իսկ, հեղափոխության ամեն ձեւի դրսեւորումներին, որոնք, իբրեւ կանոն, միշտ առաջնորդել են ավելի մեծ ողբերգությունների եւ այլասերումների: Հոդվածը հրապարակում ենք պատասխանատուներին, բոլո՛ր պատասխանատուներին զգուշացնելու հեղափոխության եւ հեղափոխականների ուրվականից:

Հայաստանում ձեւավորվել է հեղափոխական իրավիճակ: «Ներքեւները չեն ուզում, իսկ վերեւները չեն կարողանում» դասական բանաձեւը համակել է հանրապետության հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Եւ անկախ այն բանից, թե որքան ժամանակ իշխանություններն ու ընդդիմությունը չտեսնելու կտան այս օբյեկտիվորեն ծառացած հիմնահարցը ու նրանից բխող պահանջները, հանրապետությունն ու ժողովուրդը շարունակելու են ապրել հեղափոխական իրավիճակի պայմաններում, մինչեւ որ այն կունենա իր տրամաբանական եզրահանգումը ի դեմս վարչակարգի ամբողջական փոփոխության, ներքաղաքական եւ արտաքին քաղաքականության ուղղվածության հիմնարար տեղաշարժերի, իսկ դրանք արհեստական կամ ուժային միջոցներով շրջանցելու դեպքում՝ մինչեւ հասարակական կյանքի լիակատար կազմալուծումը:

Ընդ որում, ցանկացած երկրում հասարակական կյանքի լիակատար անդամալուծությունը, երբ երկիրը մատնվում է անիշխանության եւ քաոսի, անմիջական հետեւանքն է ավարտի չհասած հեղափոխական իրավիճակի, երբ հասարակությունը տարբեր պատճառներով անընդունակ է լինում հաղթահարելու իր զարգացմանը խոչընդոտող վարչակարգը, նրա արդեն իսկ կառավարումից ծնված այլանդակ կառույցները, մի խոսքով այն ամենը, ինչը անհնար է դարձնում տվյալ երկրի եւ նրա ժողովրդի զարգացման բնական ընթացքը: Երրորդ աշխարհի տասնյակ երկրներ, որոնք Սոմալիի կամ ավելի մեղմ տարբերակներով դատապարտվել են անգոյության, մեկ օրում չէ, որ հասել են նվաստացման նման աստիճանին: Նրանք անցել են չիրականացված հեղափոխությունների եւ տեղաշարժերի ցավագին ճանապարհով մինչեւ այն պահը, երբ ժողովուրդը իբրեւ կենտրոնական եւ գործողությունների ընդունակ միավոր դադարել է գոյություն ունենալուց, զոհ գնալով չբավարարված պահանջմունքներից ծնված ինքնայլասերմանը, իսկ երկիրը դարձել է առանձին ռազմաքաղաքական կազմավորումների մրցակցության թատերաբեմ:

Առողջ հասարակությունները գերադասել են եւ այժմ էլ գերադասում են էվոլյուցիոն տեղաշարժերը անկանխատեսելի տարերայնություն պարունակող հեղափոխություններից, սակայն երբ վարչակարգն ընդունակ չէ արմատական տեղաշարժերի, իսկ հասարակության մեջ ծաղկում ապրող այլանդակ կառույցներն ու երեւույթներն անմիջականորեն սպառնում են նրա գոյությանն իսկ, հեղափոխական ճանապարհով դրանց հաղթահարումը կենսական պահանջմունք է դառնում:

Այս դեպքում, ամեն գնով հասարակական համերաշխության պահպանման կարգախոսն իր հիմքում ավելի շատ տվյալ ժողովրդի եւ այն ներկայացնող քաղաքական ուժերի կամազրկության ու թուլության նշան է, քան հասարակական համերաշխության արժեքի իրական գիտակցում: Երբ հեղափոխական ճանապարհով փոփոխությունների իրականացումը դատապարտելի լիներ բոլոր պարագաներում, ապա ժամանակակից քաղաքակրթության համաստեղությունը կազմող երկրների պատմության աստղային ժամի հաշվարկը չէր կատարվի հինն ու անընդունակը տապալած հեղափոխության օրից:

Երբ մեկ տարի առաջ կանխատեսում էինք, որ եթե Հայաստանում, փողոցի հեղափոխությունում հաղթանակած ուժը չհեղափոխի եւ չձեւափոխի համաժողովրդական հեղափոխական եռանդը հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներն ընդգրկող կառուցողական ռեֆորմիստական շարժման, ապա պետականությունը չի կայանա, իսկ երկիրն ու ժողովուրդը անկում կապրեն մինչեւ երրորդ աշխարհի ստորին աստիճանակարգերը, ամենահոռետեսական հաշվարկներն անգամ թույլ չէին տալիս պատկերացնել այսօրվա անկման խորությունն ու աստիճանը: Մեր անկառավարելի իրականությունը գերազանցեց անգամ ամենահամարձակ կանխատեսումները: Գաղութատիրությունից ազատագրված ոչ մի ժողովուրդ այդպես արագ եւ ամբողջական չոչնչացրեց անցյալից ստացած քաղաքական, տնտեսական, հոգեւոր եւ սոցիալական նվազագույնի ապահովման ժառանգությունը, ինչպես դա արեցինք մենք, ներկայիս վարչակարգի առաջնորդությամբ:

Հեղափոխական եռանդը կառուցողական ռեֆորմացիայի վերածելու վարչակարգի անընդունակությունն ու չկամությունը մեզ կրկին հանգեցրել են հեղափոխական իրավիճակի, որի իրականացումից արդարացիորեն սարսափում է ժողովուրդը, որի հետեւանքներով սպառնում է վարչակարգը եւ որի պատասխանատվությունն ստանձնելուց հնարավոր բոլոր միջոցներով խուսափում է ընդդիմությունը:

Պետականության բոլոր հասկացությունները շնորհ ստացած Հայաստանի Հանրապետության ինքնաոչնչացումը դադարել է անգամ սոսկ ներհայկական խնդիր լինելուց եւ Ամանորի կապակցությամբ Ֆրանսիայի դեսպանի ուղերձի մեջ ամբողջականորեն արտահայտված էր այն մտահոգությունը, որ տածում են շրջանում աշխարհաքաղաքական շահեր ունեցող երկրները պետականության շինարարության նվազագույնն իսկ ապահովելու մեր վարչակարգի անընդունակության վերաբերյալ: Պե՞տք է արդյոք նվաստանալ մինչեւ այն աստիճան, երբ կարիբյան կամ աֆրիկական մի երկրի նման, Հայաստանում եւս մեր համազգային ինքնաոչնչացմանը խոչընդոտելու կգան լավագույն դեպքում քաղաքակիրթ աշխարհի հատուկ ծառայությունները, իսկ վատթարագույն՝ միջազգային դրոշի տակ գործող զինված ուժերը: Եթե որեւէ մեկին սա նույնքան երեւակայական է թվում, որքան մեկ տարի առաջ մեր այսօրվա անկման աստիճանի կանխատեսումը, դա պարզապես հիվանդագին ինքնահավանության պարզունակ արտահայտություն է: Իսկ թե անգամ հույսներս դրել ենք այդպիսի նվաստացման ճանապարհով մեծ քաղաքականություն իրականացնող որեւէ երկրի կողմից պաշտպանվող եւ հովանավորվող իշխանություն ձեռք բերելու վրա, որը թեկուզ կարճ ժամանակով տաքության ու բարեկեցության փշրանքներ կտրամադրի, ապա ավելորդ չի լինի հիշել Վրաստանի եւ Տաջիկստանի թարմ օրինակները, պարզապես ավելի հեռուն չգնալու համար: Ուշադիր նայենք նաեւ օտարի միջամտության ձեւերին ու միջոցներին եւ փորձենք հասկանալ, թե արդյոք դա՞ է այլընտրանքի ընդունելի տարբերակը:

Հայաստանում առկա իրողությունները վկայում են, որ այնուամենայնիվ մենք գնալու ենք վատթարագույն ճանապարհով: Վարչակարգի իշխանության համար իրական սպառնալիքի բացակայությունը թույլ է տալու նրան արհամարհելու արմատական տեղաշարժերի անհրաժեշտությունը, որը հետեւողականորեն խորացնելու է հեղափոխական իրավիճակը: Ընդդիմության պառակտվածությունը, այն ներկայացնող ազդեցիկ կուսակցությունների կախվածությունը իրենց արտասահմանյան կենտրոններից եւ սփյուռքի հասարակական կարծիքից, նրանց հագեցվածությունը շատ հաճախ քաղաքական պայքարի գիտակցությունից հեռու եւ պատասխանատվությունից ամեն կերպ խույս տվող գործիչներով եւ, վերջապես, պարզապես նրանց, իբրեւ լիարժեք քաղաքական պայքարի ընդունակ ուժերի չկայացած լինելը, առաջիկայում եւս հնարավորություն չեն տալու ղեկավարելու զանգվածները, դրանով իսկ շարժում հաղորդելու հեղափոխական իրավիճակին:

Հայաստանում չկա, դեռեւս չի ձեւավորվել նաեւ արտադրողների եւ ֆինանսական կապիտալը տնօրինող կազմակերպված եւ կուռ խավը, որն իր ապագան կկապեր միմիայն հայրենիքի հետ եւ կենսական շահագրգռվածություն կունենար պետականության կայացման գործում, դրա համար ֆինանսավորելով ու պաշտպանելով հեղափոխական իրավիճակն առաջ տանելու ընդունակ որեւէ նոր, եղած ավանդական կուսակցությունների ու խմբավորումների ազդեցությունից դուրս գտնվող, սակայն նրանց համախմբելու եւ շարժում հաղորդելու ընդունակ ուժի:

Իսկ բոլոր այն երկրներում, ուր ազգային կապիտալն աշխատում է ոչ թե երկրում իր պահանջմունքներին համապատասխան քաղաքական եւ տնտեսական համակարգի հաստատման, այլ սոսկ սեփական առօրյա բարեկեցությունն ու ապագա վտարանդիության նյութականն ապահովելու համար, դրանք հենց դատապարտված են երկարատեւ, կործանարար լճացած հեղափոխական վիճակի, դրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ:

Այսուհանդերձ, հեղափոխական իրավիճակի լճացումը հավերժ ձգվել չի կարող, առավել եւս մի այնպիսի երկրում, որը պատերազմի մեջ է եւ կարեւոր աշխարհաքաղաքական միավոր իր շրջանում: Այն ներս ընկած հիվանդության նման կապրի իր զարգացման փուլը, ներսից խոցելով հասարակական կյանքի բոլոր օրգանները, իսկ հետո կդրսեւորվի որեւէ անոմալիկ ձեւով, առավել հաճախ կամ փոխնեփոխ վերնախավային հեղաշրջումներով, կամ քաղաքացիական պատերազմով: Հայաստանում ամբողջական եւ անկառավարելի ապակենտրոնացման հետեւանքով արդեն իսկ ձեւավորվել են երբեք իրենց կենսական շահերով միմյանց խիստ հակադրվող շրջաններ, որոնք վաղ թե ուշ վիճարկելու են քաղաքական ուղղվածություն թելադրելու իրավունքը: Դրանք սահմանամերձ շրջաններն են, ներառյալ ողջ հարավը, ուր լայնածավալ պատերազմն օբյեկտիվ իրականություն է: Նրանք պահանջելու են ողջ երկրից համարժեք վերաբերմունք: Երկրորդը աղետի գոտին է, որի փլատակները պահանջում են քաղաքական եւ ազգային խնդիրների անհապաղ սառեցում եւ բոլոր միջոցների կենտրոնացում վերականգնման աշխատանքների վրա: Եւ երրորդը, դա մայրաքաղաքն է հարակից շրջաններով հանդերձ, որն առավելագույնս աչք է փակում եւ մեկի, եւ մյուսի կենսական պահանջմունքների եւ ծառացած խնդիրների վրա, իր՝ անգամ նման անմարդկային պայմանների աստիճանի իջած հանգիստն ու անհոգությունը պահպանելու համար:

Շարունակել աչք փակել օրեցօր խորացող այս հակասությունների եւ կենտրոնախուսության աճի վրա, նշանակում է ընդունել մեզ սպասող ապագայի անխուսափելիությունը:

Ի՞նչ անել: Հռետորական հարց մի հասարակության համար, որի յուրաքանչյուր անդամը հերթերում, փոխադրամիջոցներում, խոհանոցում եւ այլուր տալիս է դրա պատասխանը, բայց իր մեջ ուժ չի գտնում իրականացնել այն: Ճակատագրապաշտական անելանելիությամբ խոցված մի մարմին, որի անմխիթար ներկայի եւ սպառնալից ապագայի ողջ պատասխանատվությունն են կրում նրան առաջնորդելու առաքելությունը իրենց վրա վերցրած քաղաքական ուժերը, որոնք այս ճգնաժամային պահին զլանում են անգամ զանգվածների մեջ եւ զանգվածների հետ լինել, որը գեթ կմեղմեր լճացած հեղափոխական իրավիճակի քաոսային հարվածները:

Կարելի է միայն ենթադրել, թե ի՞նչ խոր եւ անըմբռնելի իմաստ է դրված «հեղափոխական» հասկացության մեջ, որը բաղկացուցիչ մասն է մեր հեղինակավոր, համազգային կուսակցություններից մեկի անվան, ինչը սակայն նրա գործելակերպի մեջ չի արտահայտվում: Ե՞րբ, եթե ոչ այսօր, երբ ժողովուրդն առաջնորդի կամ պարզապես կարեկցողի կարիք ունի, նրա անդամները հեղափոխական աշխատանք կծավալեն, գոնե գոյություն չունեցող սահմանադրությամբ նախատեսված իրավունքների շրջանակներում:

Նույն կերպ կարելի է միայն ենթադրել, թե լիբերալ-դեմոկրատական ի՞նչ պայծառ ապագա է պատրաստվում կերտել մեր մյուս հեղինակավոր կուսակցությունը, եթե նաեւ նրա խիստ հանդուրժողական եւ ինչ-որ տեղ անտարբեր կեցվածքի շնորհիվ է, որ այս երկիրը հետամնացության ու ինքնաոչնչացման անդունդն է գլորվել, իսկ այդ անդունդից լիբերալ-դեմոկրատիայի պայծառ աստղը հազիվ թե նշմարելի դառնա:

Եւ վերջապես, կարելի է միայն ենթադրել, թե մտավորականություն կոչվող զանգվածի ի՞նչն է ազգային, եթե այս օրհասական պահին նրա մեջ ազգի ապագայի համար համախմբվելու ընդունակ, առավել եւս խաչվելու պատրաստակամություն ունեցող նույնիսկ մի քանի անհատ չկա:

Իսկ ազգային ստեղծագործ բուրժուազիա, որը հայրենիքի ապագայի համար կկռվեր նույն համառությամբ, ինչպես ունեցվածքի համար է պատրաստ կռվելու, չենք ունեցել եւ չունենք: Այնուամենայնիվ, ժամանակն իրենն է պահանջում եւ «ի՞նչ անել» հռետորական հարցադրումը շարունակելու է տագնապ հնչեցնել հայրենիքում ապրելու մնացած յուրաքանչյուր հայի համար, անկախ կուսակցական պատկանելությունից, սոցիալական դիրքից ու ինքնահավանության վարակի աստիճանից: ■

Լուրերի Հոսք

Ելցինը Ճապոնիա իր այցի նախապայմանների եւ Ռուսաստանի իրավիճակի մասին

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը պատրաստ է որոշակի նախապայմանների դեպքում այցելել Ճապոնիա: Այդ մասին նա լրագրողներին հայտարարեց երկուշաբթի օրը Մոսկվայի մետրոպոլիտենում: «Եթե ճապոնացիները կոշտ պահանջներ չներկայացնեն կղզիների կապակցությամբ, ապա Ճապոնիա այցելությունն անպայման կիրականանա», ասաց Ելցինը: Մետրոպոլիտեն այցելության ընթացքում, որտեղ նախագահին ուղեկցում էին վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը եւ Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովը, նրանք ծանոթացան մետրոյի նոր տիպի կառուցվածքի վագոններին, որոնք ավելի տարողունակ են եւ հրդեհակայուն: Վագոնները դիտելուց հետո Բորիս Ելցինը հայտարարեց, թե դրանք «ապառազմականացման առաջին ծիծեռնակներն են, քանի որ վագոնները նախագծվել են հակաօդային պաշտպանության լավագույն համակարգեր ստեղծող նախագծային բյուրոյում: «Ինտերֆաքս» լրատվական գործակալության թղթակից Վյաչեսլավ Տերեխովի քաղաքական եւ տնտեսական իրավիճակի մասին հարցին վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը պատասխանեց, թե «երկրի տնտեսական դրությունը նորմալ է»: Ստեղծվել է նորմալ իրավիճակ կայունության հասնելու աշխատանքների համար, ասաց նա: Այդ կապակցությամբ Բորիս Ելցինը հայտարարեց, որ «այսօր երկրում քաոսի մասին խոսելու համար հիմքեր չկան: Պետք չէ վախեցնել, թե ուր որ է ճգնաժամ է սկսվելու: Իհարկե, դժվարություններ դեռ շատ կան: Շատ բարդ հիմնահարցեր կան: Սակայն եթե հանգիստ ու նորմալ զբաղվենք աշխատանքով եւ չզբաղվենք քաղաքական խաղուղարով, ավելի շուտ կլուծենք մեր հարցերը»:

Ռուսաստանի կառավարությունը վերանայել է գների կարգավորման սեփական որոշումը

Դաշնակցային Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը երկուշաբթի օրը ստորագրել է ինֆլյացիոն գործընթացների կարգավորման հետագա միջոցների եւ դեկտեմբերի 31-ի թիվ 1041 որոշման մասնակի փոփոխության մասին կառավարության որոշումը: Ինչպես «Ինտերֆաքսին» հայտնի դարձավ ոչ պաշտոնական աղբյուրներից, հունվարի 18-ին ստորագրված որոշմանը նախորդել է վարչապետի զրույցը փոխվարչապետ Վլադիմիր Շումեյկոյի եւ կառավարության նախագահի տեղակալ Բորիս Ֆյոդորովի հետ, որոնք դեմ են հանդես եկել գների կարգավորման մասին նախորդ որոշմանը: Դեկտեմբերի 31-ի որոշումը մի շարք ապրանքների գների կարգավորման մասին մամուլում եւ փորձագետների շրջանում գնահատվել էր որպես բարեփոխումներից հրաժարում: Կառավարության նոր որոշումն արգելում է կարգավորել եւ ֆիքսել ոչ միահեծան՝ արտադրողների ապրանքի գները: Դրանից բացի, կրճատվել է միահեծան ձեռնարկությունների ցուցակը, որոնց արտադրանքի գինը նշանակվում է պետության կողմից: Փաստաթուղթը նախատեսում է ֆինանսավարկային քաղաքականության կոշտացում արժեզրկման զսպման նպատակով: Այդ կապակցությամբ Ռուսաստանի ֆինանսների նախարարությանը հանձնարարվել է մեկամսյա ժամկետում մշակել բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ծրագիր պետական փոխառությունների հաշվին: Նախարարությունը պետք է նաեւ բարձրացնի ակցիզները եւ մի շարք ապրանքների արտահանման մաքսը: Կառավարությունը մտադիր է խստացնել արտոնությունների հատկացումը ձեռնարկություններին, իսկ անվճարունակ պետական ֆիրմաները վերակազմավորել: ՌԴ պետական ունեցվածքի տնօրինման կոմիտեին հանձնարարվել է նախապատրաստել ֆեդերալ ծառայության դրույթ, որը կզբաղվի անվճարունակ եւ սնանկացած ձեռնարկությունների խնդիրներով: ■

Հանդիպում

Փոխզիջումներ, բայց ոչ անձնատվություն

Անցյալ տարվա դեկտեմբերին Ստոկհոլմում տեղի ունեցավ ոչ կառավարական [illegible] կազմակերպությունների ներկայացուցիչների միջազգային հանդիպումը: Դրա նախաձեռնողներն էին Շվեդական խաղաղության կոմիտեն, Ուլոֆ Պալմեի միջազգային կենտրոնը եւ Հելսինկիի Քաղաքացիական ժողովը: Քննարկվող երեք թեմաներից մեկն էր «Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում եւ դրա շուրջ»: ԼՂՀ ՀՔԺ-ն, որ ինքնուրույն կազմակերպություն է եւ չի մտնում ոչ Հայաստանի, ոչ Ադրբեջանի կառույցների մեջ, ներկայացնում էր ԼՂՀ ռազմական ուժերի փորձագետ Լարիսա Ալավերդյանը:

— Տիկին Ալավերդյան, դուք Ստոկհոլմ էիք գնացել Հայաստանի եւ ԼՂՀ-ի ՀՔԺ-երի համատեղ մշակած ծրագրով: Արզու Աբդուլլաեւայի մոտ իրենց ծրագիրն էր: Հետո աշխատելով «հեռատեսությամբ» դուք եկաք «ընդհանուր հայտարարի»: Դժվա՞ր եղավ նման համահեղինակությունը: Ո՞րն էր սկզբում գերիշխում՝ համաձայնությո՞ւնը, թե տարաձայնությունը:

— Անկեղծ ասած դժվար էր: Առաջին հերթին՝ հոգեբանորեն, դա ինչպես կմեկնաբանվի, ինչպես կընկալվի: Դա նաեւ ինչ-որ տեղ անձնական քաջության հարց է: Գիտե՞ք, շվեդական մի թերթի հետ հարցազրույցում ես ասել եմ, որ Արզու Աբդուլլաեւային ես դեռեւս հավատում եմ, բայց նրա կառավարությանը՝ ոչ: Նա եւ Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատիան չեն թաքցնում, որ Ղարաբաղում խաղաղություն կհաստատեն պայմանով, եթե այն մնա իրենց պետության կազմում: Հիշեք, դեռեւս օգոստոսին Ադրբեջանի ՍԴԿ-ի ղեկավարներից մեկն ասաց, թե իրենց կուսակցություններն ու կառավարությունը ամեն ինչում կարող են տարաձայնություններ ունենալ, բացի այն, որ Ղարաբաղն Ադրբեջանի պատմական անբաժանելի տարածքն է: Այսինքն, խնդրի միջուկը դուրս է նետվում: Եւ դա դժվարացրեց շփումը:

— Այդ դեպքում ինչի՞ վրա եք հույս դրել:

— Հակամարտությունը չի կարող կարգավորվել հակամարտության պատճառ դարձած պայմանն ընդունելու ճանապարհով: Այն հաստատվում էր անգամ Ադրբեջանի արտաքին գործոց նախարարի հետ զրույցի ընթացքում, որը սիրով համաձայնեց Ստոկհոլմում հանդիպել «արտաքսված Ղարաբաղի ներկայացուցչի» հետ (դա նրա արտահայտությունն է): Նրա այդ հակատրամաբանությունը մենք պետք է կոտրեինք տրամաբանությամբ: Էլ չխոսենք մեր մյուս փաստարկների մասին: Դրանց մասին հետո: Առայժմ «հույսի» մասին, ինչպես դուք հարցրիք: Ուրեմն, նախ կառավարական եւ ոչ կառավարական բոլոր փաստաթղթերում հակամարտությունը կոչվում է «Ղարաբաղյան», չնայած խոսում են «Ադրբեջանի ներքին խնդրի» եւ «Հայաստանի ու (կամ) Ադրբեջանի միջեւ տարածքային պահանջների» մասին: Այսինքն, այն որպես առանձին սուբյեկտ չի դիտվում: Հետո, չնայած Ռաֆաելլիի առաքելության փակուղու առջեւ կանգնելուն, ԵԱՀԽ-ն անհրաժեշտ էր համարում այդ ուղղությամբ աշխատանքը: Ստոկհոլմի մեր հանդիպումը դրա լրացուցիչ ապացույցն է:

— Այո, սակայն առայժմ վաղ է խոսել շոշափելի հաջողությունների մասին: Ձեզ չի՞ թվում, արդյոք, թե պատճառն այն է, որ կենտրոնացում չկա, կառավարական, ոչ կառավարական կազմակերպությունները, անձնական նախաձեռնությունը՝ յուրաքանչյուրն իր առաջարկություններով: Ընդհանուր գիծ չկա ոչ ԼՂՀ-ի ներսում, ոչ ԼՂՀ-ի ու Հայաստանի միջեւ: Ինչպե՞ս հույս դնել այսպես ասած «հեռատեսության» վրա:

— Ավելին, այն չկա նաեւ բուն Հայաստանում: Դուք ճիշտ եք, դա միայն վնասում է: Դա թյուրիմացության մեջ է գցում համաշխարհային հասարակայնությանը: Անգամ մեր հանդեպ բարյացակամ տրամադրվածները հաճախ չեն հասկանում, թե մեր ուզածն ինչ է: Ինչ-որ բան խանգարում է: Երբ հասկանանք, թե ինչ ենք ուզում, աշխարհին բացատրելը հեշտ կլինի:

— Փորձում ենք, եթե չանել, գոնե ըմբռնել դա: Ձեր կարծիքով, ո՞րն է «ինքնըմբռնման» գլխավոր խնդիրը:

— Ինձ թվում է, մենք երկար եւ սխալ ձեւով հույս էինք կապում մարդու իրավունքների խախտման հետ: Դրանով մենք նպաստեցինք հակամարտությանը էթնիկական բնութագիր տալուն: Այսինքն, ի վնաս մեզ, քաղաքականից, ինչպես այն իրականում է, մենք այլ հունի մեջ դրեցինք այն: Իհարկե, երբ մարդիկ են զոհվում, դա մարդկայնորեն հասկանալի է:

— Ներեցեք, դա ոչ թե «մարդկայնորեն է հասկանալի», այլ ավելի շուտ հասկանալի է որպես քաղաքական վրիպում, որպես ժամանակի հաշվարկի ճիշտ կետը գտնելու անկարողություն:

— Թերեւս ինչ-որ չափով՝ այո: Սակայն մենք պարզունակ ու անփորձ էինք: Գոռում էին, ով կարող էր, որ եւ ում կարող էր: Ընդ որում, մի բանի էջում փորձում էինք շարադրել խնդրի բոլոր տեսանկյունները: Ցավոք, մենք մինչեւ այժմ էլ չենք սովորում գործնականում հակամարտությունը բաժանել բաղադրիչ մասերի:

— Ահա մենք գտանք մեր դժբախտությունների ելակետերից մեկը: Մենք միացրել ենք «հաղորդիչ սարքը», չիմանալով ինչ ալիքների վրա է աշխատում «ընդունիչը»: Արդյունքում դրանցից շատերը մեզ ընկալում են որպես «աղմուկի միջոց»: Իսկ եղած-չեղածը «գտիչներ» են պետք, հարկավոր է յուրաքանչյուր «կետին» համապատասխան ազդակ հաղորդել:

— Այո, որպես տնտեսագետ եւ մաթեմատիկոս ես հասկանում եմ, որ յուրաքանչյուր խնդիր սկզբում հարկավոր է դիֆերենցել, ապա՝ ինտեգրել: Այժմ մեր խնդրին են լծվել միջազգային շատ կազմակերպություններ: Եւ արդեն հարկավոր է հստակ տարբերակել, թե դրանցից որի մոտ մեր խնդրի որ մասը պետք է բողոքարկել: Ում՝ մարդու իրավունքների գծով, ում՝ պատմական տեսանկյունով, ում՝ քաղաքական եւ այլն: Որպեսզի ոչ թե նրանք գլուխ կոտրեն, թե ինչով կարող են մեզ օգնել, այլ մենք ընդհանուրից հասցեագրենք նրանց այն հարցերը, որոնք նրանց հասու են:

— Այսինքն, թեեւ այս ամենը մի բառով հակամարտություն է կոչվում, սակայն ունի բազմաթիվ տեսանկյուններ: Դրանք հարկավոր է տարբերակել, մշակել յուրաքանչյուրը, այդ թվում լուծման ինտեգրացիան: Սա մեկ: «Մեծ աշխարհում» ձեր գործնական փորձի եւ շփման արդյունքում էլի ինչ-որ բանի հետ առնչվե՞լ եք:

— Առնչվել եմ, ընդ որում շատ յուրօրինակ ձեւի: Աշխարհում մեզ օգնել ցանկացողներ կան: Սակայն դեռեւս Հարավսլավիայից փախստականների առաջին հոսքը, եւ էլի այլ երկրներից, Եվրոպայում վախ ծնեց: Վախ, որ նրանց խաղաղ, հարմարավետ կյանքը խանգարվելու է...

— «Բարբարոսների» հերթական արշավանքնե՞րով:

— Այո, այստեղից էլ հետեւում է «լավ է այնտեղ, որտեղ մենք չկանք» առածի երկրորդ իմաստը: Այսինքն նրանց համար առանց մեզ էլ լավ է, իսկ մեզ հետ լավ է, երբ մենք մեր տեղում ենք, այլ ոչ թե լցվում ենք նրանց վրա: Նրանց համար դա զգալի է մի շարք տեսանկյուններով, այդ թվում նաեւ նյութական: Սա նրանց համար սարսափելի է: Այստեղ է, որ անձնական շահերի եւ համամարդկային հումանիզմի բախումը կարող է անկանխատեսելի արդյունքներ տալ: Ո՞րն է լինելու տիրապետողը: Շատ բանով դա կախված է մեզանից: Նրանից, թե մենք ինչպես նրանց կհասցնենք հակամարտության էությունը: Այսինքն այնտեղ Եվրոպայում, մեզ լսելու պատրաստ ականջներ կան: Իսկ մենք պետք է իմանանք, թե դրանց ինչ եւ ինչպես ենք ասելու:

— Ձեր ուղեւորության արդյունքները «ունկնդրված» լինելու հույսեր տալի՞ս են: Դրանք ձեզ բավարարո՞ւմ են:

— Այո: Շատ կարեւոր եմ համարում հակամարտության պատմաիրավական կողմերի ուսումնասիրման եւ անկախ հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ ամփոփիչ փաստաթղթի կետը: Դա մեր վաստակն է: Մենք վաղուց պետք է ամենից էլ հասցնեինք մեր գիծը:

— Այդպես ադրբեջանցիներն էլ կհասցնեն:

— Եւ կհասցնեն: Ու դա նորմալ է: Առավել եւս, որ դա մեր օգտին է, նրանց անտրամաբանությունը մեր տրամաբանությամբ կոտրելու միջոցով: Նման հիմնավորումներից մեկի ժամանակ, օրինակ, հեշտությամբ պարզվում է երեք բացահայտ զեղծարարություն: Որքան շատ նրանք չարչարվեն, մեզ համար այնքան հեշտ կլինի փաստացի հերքել նրանց: Իսկ անկախ փորձագետները կարող են որոշել, թե որտեղ է զեղծարարությունը, որտեղ՝ ճշմարտությունը: Հարկավոր է այնպես անել, որ նրանք իմանան, որ մենք գիտենք այն, ինչ բոլորն էլ գիտեն: Խոսքը ԼՂՀ-ի օրինական կազմավորման, ստեղծման պատմաիրավական հիմքի մասին է:

Մեր հաջորդ էական արդյունքը: Տեսեք, արյունահեղությունը չի դադարում, որովհետեւ Ադրբեջանը պնդում է «կազմի մեջի» վրա, իսկ ԼՂՀ-ն՝ ինքնուրույնության: Մենք առաջարկում ենք դադարեցնել կրակը ոչ «կազմում» կամ «դուրս» լինելու պայմանով: Մեր կարծիքով, կրակը դադարեցնել է պետք՝ ձեռնպահ մնալով քաղաքական տարաձայնություններից ու ձեւակերպումներից, իսկ կարգավիճակի հարցը որոշել հետագայում, հնարավոր է երկար ժամանակում, սակայն հանգիստ: Փաստորեն մենք քաղաքական մարտ ենք վարում զինվորական մարտադաշտում:

— Սակայն, ներեցեք, եթե նման բան հնարավոր է, վաղուց հնարավոր կլիներ:

— Ղարաբաղին խաղաղության հատուկ գոտու կարգավիճակ տալու ձեւով: Դրա հեռավոր օրինակը Արեւմտյան Բեռլինն է:

— Ուրեմն մեր դեմքն իր մեջ պարունակում է երրորդ երկրների շահագրգռվածությունը:

— Իհարկե:

— Իհարկեն՝ իհարկե, սակայն մենք չէ՞ինք, անգամ մեր հարեւանները, որ զգում էինք, թե «բեժ կետում» կրակը պաշտպանում են «երրորդ դեմքերը»: Հո չենք սիրում ծայրահեղությունների մեջ ընկնել ու միջամտողներ որոնել, դաշնակիցներ ունենալու փոխարեն: Այդպես [illegible] բաց թողեցինք [illegible], երբ կարող էինք աշխարհին փաստարկված ու համոզիչ ապացուցել, որ ղարաբաղյան «բեժ կետի» կայծից բոց կբռնկի: Այժմ, երբ այդ կետերը հարյուրավոր են, դրա վրա չես խոսա:

— Սակայն դա կարելի է, այլ զուգահեռ ուղղությամբ, ծախսերի ու կորուստների աստիճանի վրա: Ասում են, հակամարտությունը կդադարի, երբ չափազանց թանկարժեք դառնա: Հարկավոր է դրա վրա համառել: Այնուհետեւ, մեր հանդիպման արդյունքների մասին: Մարդասիրական օգնություն: Տարօրինակ չէ՞, որ այն տալիս են Ադրբեջանի կամ Հայաստանի միջոցով: Վերջինս, ի դեպ, հակառակորդին առիթ է տալիս պնդել, որ այն ռազմական է: Ահա մենք փաստացի հիմնավորեցինք, որ այն պետք է ուղղակիորեն տրվի Ղարաբաղին:

— Նրա ո՞ր մասին: Հայկակա՞ն, թե ադրբեջանական:

— Ի դեպ, դրա շուրջ շատ վեճեր են եղել: Սակայն անցել է մեր առաջարկությունը՝ կենտրոնը Ստեփանակերտը լինելու մասին: Ընդ որում դա էին պնդում եվրոպացիները: Դարձյալ օգնեց «անտրամաբանական տրամաբանությունը»՝ եթե Լեռնային Ղարաբաղի համար է, ուրեմն տրամաբանական է, որ լինի նրա մայրաքաղաքում:

— Իսկ ձեզ համար անախորժ որեւէ բան եղե՞լ է:

— Եղել է: Ես կարծում էի, ձգտելով միայն մեզ համար [illegible] դեպքերն արագացնել, [illegible] ենք ժամանակը: Պարզվում է, որ եվրոպացիներին էլ դա խորթ չէ: Օրինակ, դեկտեմբերի 21-ին պատանդներին փոխանակելու կետը: Ախր պարզ է, որ դա անիրագործելի է, չէ՞ որ դա ծանր, առանձին մարդկանց կյանքի, ռիսկի հետ կապված աշխատանք է: Ոչ այնքան կազմակերպությունների, որքան առանձին մարդկանց: Կամ Իջեւան-Ղազախ մարդասիրական միջանցքի ստեղծումն այդ նույն ժամանակ:

Նման դեպքերում չի կարելի չմտածված փութկոտություն ցուցաբերել, այլապես մենք կգլորվենք մինչեւ քաղաքական անսկզբունքայնություն: Չէ՞ որ փաստաթղթի յուրաքանչյուր չկատարված կետ սպառնում է այն վերածել թղթի: Այն որակազրկում է աշխատանքն ամբողջությամբ: Եւ մենք չենք կարող մեզ դա թույլ տալ:

— Ամփոփման փոխարեն ես ուզում եմ ձեզ փոքր-ինչ խարդախ հարց տալ: Դատելով ամեն ինչից, ընդհանուր առմամբ դուք գոհ էիք Ստոկհոլմի հանդիպման արդյունքներից: Դուք ասացիք, որ աշխարհում մեծ նշանակություն են տալիս ժողովրդական դիվանագիտությանը: Դուք հաստատում եք, որ մենք հսկայական ներուժ ունենք, որը պետք է իրացվի: Ինչպե՞ս եք վերաբերվում Աշոտ Բլեյանի եւ Կարեն Սարդարյանի «Նոր ուղու» նախաձեռնությանը:

— Գիտեք, ցանկացած հակամարտության խաղաղ լուծման հիմքում ընկած է փոխզիջումը: Նրանց առաջարկությունը ոչ թե փոխզիջում է, այլ անձնատվություն: Եթե հավատանք Բլեյանին, ապա Ադրբեջանում բոլորը, կառավարությունից մինչեւ հասարակական կազմակերպությունները, խաղաղություն են ուզում: Սակայն բանն այն է, որ խաղաղությունը չի կայանում, ուրեմն մեղավորը մենք ենք: Առավել եւս, որ ըստ Բլեյանի, Հայաստանում բոլորը չէ եւ միանշանակ չէ, որ հաստատում են հակառակը: Նման դիրքորոշմամբ ինչպե՞ս ենք աշխարհին հավաստիացնելու, որ մենք խաղաղություն ենք ուզում: Ընդհակառակը, դա բոլորին ավելի շատ կխճճի: Հարկավոր է ճշմարտության աչքերին նայել, եւ այստեղ, եւ այնտեղ կան եւ դրական, եւ բացասական ուժեր: Երբ մենք ուզում ենք հաջողության հասնել, հարկավոր է համախմբել առաջիններին: Իսկ ստով փրկվել չի լինի:

Զրույցը վարեց
ԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ԳՐԱՎՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐ. ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՇԻՌԸ

Ծայրահեղական Համաս շարժումը արմատներ է ձգել բնակչության մեջ եւ լրջորեն մրցակցում է Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ

Դա գրեթե նման է անճողարության... Ամեն անգամ պաղեստինցի արմատականների Համաս շարժումը հաջողացնում է հանդգնորեն քամահրել Իսրայելի զինվորական եւ քաղաքական պատասխանատուներին: 1989 թ. օրենքից դուրս հայտարարված, բազմաթիվ զանգվածային ձերբակալությունների հետեւանքով փաստորեն գլխատված շարժումը պետք է վերջին սպանիչ հարվածն ստանար 415 ակտիվիստների արտաքսումից հետո: Բայց Համասի մահափորձերն այդուհանդերձ չեն դադարում: Վերջինը Երուսաղեմում Իսրայելի ներքին անվտանգության ծառայության գործակալ Հայիմ Նահմանիի սպանությունն է: Եւ այժմ հարց է ծագում. Համասը եւ պաղեստինցիների արմատականության վերելքը արդյոք դարձե՞լ են անշրջանցելի երեւույթներ:

Ծագումը: Գազայի հատվածում «Մուսուլման եղբայրները» հաստատվել էին 1967-ից առաջ, երբ այդ տարածքը վերահսկվում էր Եգիպտոսի կողմից: 80-ական թվականներին այդ կազմակերպության հովանու ներքո ստեղծվեցին կրոնական բնույթի բազմաթիվ բարեգործական միություններ: Դրանք դպրոցներ, բուժարաններ, մարզական ակումբներ հիմնեցին պաղեստինցի երիտասարդությանն իսլամին մերձեցնելու նպատակով: Իսրայելի զինվորական իշխանությունները այդ գործունեությանը չէին խոչընդոտում երկու պատճառով: Առաջին, արմատականների այդ միությունները կարող էին հակակշռել Պաղեստինի ազատագրման կազմակերպությանը (ՊԱԿ), երկրորդ, դրանց համար Իսրայելի պետությունը ծախս չէր անում, քանի որ միությունները ֆինանսավորվում էին Սաուդյան Արաբիայից:

Այդ միություններից ամենամեծը կոչվում էր «Ալ Մուջամաա ալ Իսլամի»: Դրա ղեկավարն էր շեյխ Ահմադ Յասինը, մի պրոֆեսոր, որը Կահիրեում Այն Շամս համալսարանում հաճախել էր «Մուսուլման եղբայրների» դասերին: Ա. Յասինը ծնվել է 1936 թ. Աշքելոնում Իսրայելի հարավում, իսկ 1948 թ. նա փախստական էր Գազայում: 12 տարեկանից հաշմանդամ դարձած այդ կարճահասակ, մորուքավոր մարդը, որը տեղաշարժվում էր հաշմանդամի սայլակով, առաջնորդի անվիճելի զորություն ուներ եւ դարձավ պաղեստինցի արմատականների թիվ մեկ ղեկավարը:

Ռազմաքաղաքական շրջադարձը: 1987 թ. դեկտեմբերին, երբ Ինթիֆադան նոր էր սկսվել, շեյխ Յասինը համախմբեց իր մերձավոր դասախոսներին, բժիշկներին, այլ անձանց: Նրանք համատեղ որոշեցին վճռական քայլի դիմել՝ կրոնական ու մանկավարժական միությունից փոխակերպվել ռազմաքաղաքական կազմակերպության եւ մասնակցել ապստամբությանը: Կազմակերպությունն ստացավ Համաս անվանումը (Իսլամական դիմադրության շարժում): Սկսեց կիրառվել գործունեության եւ ֆինանսավորման հստակ ծրագիր: Կազմակերպությունը ճյուղավորումներ ունի ամբողջ Գազայի հատվածում: Մզկիթները ծառայում են որպես հանդիպատեղիներ: Երբ 1967 թ. դրանց թիվը մոտ 70 էր, ապա այսօր կա առնվազն 170 մզկիթ:

Գաղափարախոսությունը: 1988 թ. օգոստոսին հռչակագիր հրապարակելով, Համասը իրեն դրսեւորեց որպես ՊԱԿ-ի քաղաքական եւ գաղափարախոսական այլընտրանք: Այդ փաստաթղթում Համասը իրեն բնորոշում է որպես ծայրահեղական կազմակերպություն, որը պահանջում է «Մեծ Պաղեստինը՝ Իսլամի սուրբ հողը», դատապարտում է «խաղաղ լուծման հասնելու բոլոր փորձերը» եւ իրեն համարում «սիոնիստ զավթիչների դեմ մղվող սրբազան պատերազմի՝ Ջիհադի շղթայի օղակներից մեկը»:

Ենթակառուցվածքը: Համասը ապակենտրոնացված կազմակերպություն է, որը կիրառում է անջրպետման մեթոդը: Զինված փոքր խմբերն առանձին գործում են Գազայի հատվածի բազմաթիվ մասերում, ինչպես նաեւ Այսրհորդանանում, Հեբրոնի շրջանում: Իսրայելի կողմից որպես «ահաբեկչական» կազմակերպություն գնահատված Համասը իրեն համարում է պարտիզանական պատերազմի շարժում, որը հարվածում է Իսրայելի անվտանգության ուժերին եւ «սուզվում» պաղեստինցի բնակչության մեջ, ինչպես ձուկը ջրում: Շարժման կրոնական եւ գաղափարախոսական պատասխանատուները երկիմաստ արտահայտություններ են անում բռնության շուրջը: Սահմանապահ Նիսիմ Տոլեդանոյի առեւանգումից հետո շեյխ Յասինը իր բանտախցից Իսրայելի հեռուստատեսությամբ հայտարարեց. «Ես դեմ եմ թե պաղեստինցիների եւ թե իսրայելցիների սպանությանը: Բռնությունների այս շարքը պատճառներ ունի: Հենց որ այդ պատճառները վերանան, բռնությունը կդադարի»: Բայց հենց Համասի անդամներն էին, որ 1989 թ. առեւանգեցին եւ սպանեցին իսրայելցի զինվորներ Ավի Սասպորտասին եւ Իլան Սադոնին: Եւ այդ սպանություններին մեղսակից լինելու համար էր, որ շեյխ Յասինը դատապարտվեց ցմահ բանտարկության:

Հակամարտությունը ՊԱԿ-ի հետ: Հենց սկզբից Համասը հրապարակեց հայտարարություններ, որոնք տարբերվում էին Ինթիֆադայի միացյալ վարչության հրապարակումներից: ՊԱԿ-ի հետ նրա հարաբերությունները վայրիվերումներ ունեցան:

Որոշ պահերի Գազայում նույնիսկ փողոցային մարտեր տեղի ունեցան երկու խմբավորումների անդամների միջեւ: Ընդունված է այն կարծիքը, որ իսլամականները կստանային քվեների 30 տոկոսը, եթե ընտրություններն անցկացվեին Այսրհորդանանում եւ Գազայում: Ի դեպ, իսլամականները քվեների 30-40 տոկոսն են ստանում արհմիութենական եւ համալսարանական ընտրություններում:

Համասի բարգավաճումը: Այսրհորդանանում եւ Գազայում Իսրայելի գործողությունների համակարգիչ, գեներալ Դանի Ռոտշիլդը Համասի վերելքը հիմնականում վերագրում է տնտեսական պատճառներին: Նա ընդգծում է, որ այդ կազմակերպությունն իր համար ապահովել է Իրանի եւ Սաուդյան Արաբիայի անուղղակի ֆինանսավորումը, մինչդեռ ՊԱԿ-ի ֆինանսավորման աղբյուրները նվազել են Ծոցի պատերազմից ի վեր: Երուսաղեմի համալսարանի պրոֆեսոր Էմանուել Սիվանը գտնում է, որ Համասի վերելքը հնարավոր կլինի կանգնեցնել Գազայի հատվածի տնտեսական զարգացման խթանմամբ: Նա միաժամանակ արձանագրում է, որ «երիտասարդ պաղեստինցիների հիասթափությունը, ապագայի հանդեպ համակերպումը նրանց հետեւությամբ տանում են դեպի մզկիթներ եւ Իսլամի ապաստանիչ արժեքներ»:

Ապագան: Համասը որպես պաղեստինյան խնդրի անշրջանցելի գործոն կարո՞ղ է արդյոք անհետանալ: Կին լրագրող Միշա Սելյան, որը տարիներ շարունակ ուսումնասիրում է Գազայում արմատականության վերելքը, դա անհավանական է համարում: Համասն այն առանձնահատկությունն ունի, որ համաարաբական շարժումից՝ «Մուսուլման եղբայրներից» ծագած կազմակերպություն է, որը վերածվել է պաղեստինցիների իսկական ազգայնական կուսակցության եւ ժողովրդական արմատներ ունի», ասում է նա: Ինչ վերաբերում է այն՝ հարցին, որ Համասը, իր ծայրահեղականությանը հակառակ, կարո՞ղ է արդյոք մասնակցել քաղաքական կարգավորման բանակցություններին, այն մնում է բաց: Իր արտաքսումից քիչ առաջ դոկտոր Աբեդ Էլ Ազիզ Ռանտիսին հավաստել էր. «Համասը դեմ է Վաշինգտոնի բանակցությունների առարկա պաղեստինյան ինքնավարությանը, բայց նա ուժ չի գործադրի այն անձանց դեմ, ովքեր կբռնեն այդ ուղին»: ■

Ռուսաստան

Ե. Համբարձումովը START-2-ի եւ Պարսից ծոցի իրավիճակի մասին

Ռուսաստանի ԳԽ նախագահ Ռուսլան Խասբուլատովը երեկուշաբթի օրը հավանություն տվեց միջազգային եւ արտաքին տնտեսական հարցերով հանձնաժողովի առաջարկությանը START-2 պայմանագրի վավերացման նախապատրաստական խորհրդարանական լսումները մարտ ամսին ԱՄՆ կոնգրեսի հետ միացյալ անցկացնելու կապակցությամբ: Այդ մասին «ԻՖ»-ին հայտնեց այդ հանձնաժողովի նախագահ Եվգենի Համբարձումովը:

Նա հայտնեց, որ ամերիկացիներն առաջարկել են START-2-ի վավերացման նախապատրաստական հեռուստակամուրջներ անցկացնել Ռուսաստանի խորհրդարանի պատգամավորների եւ ԱՄՆ-ի կոնգրեսականների, ինչպես նաեւ երկու երկրների փորձագետների միջեւ:

Ե. Համբարձումովը նշեց, որ առայժմ չի կարող տալ START-2-ի փաստաթղթերի ծրարի գնահատականը, քանի որ այն դեռ չի ներկայացվել ԳԽ-ին: Միեւնույն ժամանակ նա այդ պայմանագիրը գնահատեց որպես «առանձնահատուկ կարեւոր», որի ստորագրումը երկու տերությունների կողմից անշուշտ դրական փաստ է: Սակայն Համբարձումովը նշեց, որ ինքը դեմ է այդ փաստաթղթին «ինչպես հիացական, այնպես էլ բացասական վերաբերմունք ցույց տալուն»:

Խոսելով Պարսից ծոցի իրավիճակի մասին, Համբարձումովը ընդգծեց, որ «ակնհայտ է Իրաքի կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի ոտնահարումը, որի օգտին քվեարկել է նաեւ Ռուսաստանը»: Միեւնույն ժամանակ հանձնաժողովի նախագահը նշեց, որ «Ռուսաստանը չի կարող անտարբեր լինել Իրաքի գործողությունների խափանման միջոցների նկատմամբ»:

«Կարծում եմ, նշեց Համբարձումովը, որ մենք պետք է շահագրգռված լինենք ոչ թե այդ երկրի ռազմական գործողությունների ծավալմամբ, այլ առճակատման կարգավորմամբ, առաջին հերթին խաղաղ քաղաքական միջոցներով»: Միեւնույն ժամանակ նա ասաց, որ իրեն «զարմացնում է խորհրդարանի մի շարք պատգամավորների դիրքորոշումը, որոնք պնդում են, թե Իրաքը Ռուսաստանի դաշնակիցն ու բարեկամն է, այն դեպքում, երբ նա հստակ արտահայտված ռազմական բռնապետություն է»: ■

Ելքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների կատարումն է

Ռուսաստանի արտգործնախարարությունը գտնում է, որ Իրաքի շուրջ ստեղծված իրավիճակը կրկին անցել է վտանգավոր սահմանագիծը, կան զոհեր: Հունվարի 18-ին Մոսկվայում հրապարակված հայտարարության մեջ նշվում է, որ «իրավիճակի կարգավորման բանալին Բաղդադում է, որն ուշադրություն չդարձրեց բազմաթիվ նախազգուշացումներին»:

«Պետք է պարզ դառնա, որ ելքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մեջ է», ասվում է փաստաթղթում: Դա թույլ կտա վերանայել լարվածությունը Պարսից ծոցի գոտում, ապահովել Իրաքի եւ նրա հարեւանների անվտանգության եւ տարածքային ամբողջականության երաշխիքները:

Մոսկվայում «հաստատակամորեն ելնում են այն բանից, որ հակազդեցությունն Իրաքի գործողություններին վերաբերյալ պետք է լինի համապատասխան եւ միայն համաձայնեցված որոշումների հիման վրա»: Ըստ երեւույթին, հասունացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում իրավիճակը կրկին քննարկելու անհրաժեշտությունը:

Ռուսաստանի արտգործնախարարության հայտարարության մեջ հատուկ նշվում է, որ «մեզ համար առաջնային կարեւորություն ունի Բաղդադում ռուսական գաղութի անվտանգությունը»:

Այդ մասին Մոսկվան տեղեկացրել է ամերիկյան կողմին: «Ցանկանում ենք, որ այդ մասին իմանան Իրաքում», ասվում է Դաշնակցային Ռուսաստանի արտգործնախարարության հայտարարության մեջ: ■

Կոզիրեւը զսպվածու
կոչ է ա

Ռուսաստանի արտգործնախարա
րեւ Կոզիրեւը գտնում է, որ Բոսն
կոնֆլիկտի խաղաղ կարգավ
հավանականությունը պահպանվ
Դա պայմանավորված է միջազ
միջնորդներ Սայրըս Վենսի ե
Օուենի ծրագրի իրականացմա
Դրա հետ մեկտեղ Կոզիրեւը չբա
որ եթե Բոսնիայի սերբերը մերժե
ծրագիրը, ապա կծագի միջազ
միջամտության հարցը: Ռուսա
Նախարարը նշեց, որ այսօր կա
կարելի է խոսել միայն Բոսնիա
ռածի վրայով «ոչ թռիչքային
ապահովելու մասին: Ընդ որում,
րեւը նշեց, որ ռազմական ավիա
թռիչքների արգելումն ամենեւին
սերբական միջոցառում չէ, այն
ված է բոլոր հակամարտ կողմեր
Վերջերս ավելի հաճախակի խա
ներ են կատարել խորվաթները: Ի
րաբերում է Կոսովոյում հասուն
կոնֆլիկտի նկատմամբ Ռուսաստ
դիրքորոշմանը, Ա. Կոզիրեւն ասա
Մոսկվան կոչ է անում Կոսովո
բանական բնակչության իրավուն
այդ թվում ինքնավարություն ու
լու իրավունքի պահպանմամբ:
հետ մեկտեղ Դաշնակցային Ռուսա
նը չի աջակցում Կոսովոյի ան
դական տրամադրություններին եւ
դեմ է գալիս Սերբիայի տարած
ամբողջականության կողմ:

Ժիրինովսկին աջակ
է Սադդա

Լիբերալ-դեմոկրատական կուսա
թյան ղեկավար Վլադիմիր Ժիրի
կին կրկին իր համերաշխութ
հայտնեց Իրաքին եւ նախագահ
դամ Հուսեյնին: Կուսակցության
վիրակությունը մեկնել է Իրաք:
նովսկին Սադդամին է հանձնել
թական ուղերձը, որի մեջ նշվում
պատվիրակությունը կժամանի «Լ
Անգլիայի եւ Ֆրանսիայի հերթ
ագրեսիայի պահեդ ժամին, որպ
ու ուսի կանգնի բարեկամակա
ղովրդի հետ»: Ժիրինովսկին հա
տիացրել է Սադդամին, որ լիբերա
մոկրատական կուսակցությունը
քարում է Իրաքի նկատմամբ կիրա
միջազգային շրջափակման դեմ
նշել է, որ Ռուսաստանի կաղերն
թական արեւելքի հետ կարող են
գնալ առանց արեւմտյան միջնո
թյան, ինչի համար անհրաժեշտ է
տոկոսներ վճարել»

Դեմ են կանոնադրությ
ստորագրմ

Ուկրաինայի խաղաղության խոր
եւ խաղաղության հիմնադրամի
խագահությունները արտահայտվե
հանրապետության նախագահի կո
ԱՊՀ կանոնադրության ստորագր
դեմ: «Առաջարկված տարբերակով
նոնադրությունը սպառնում է Ուկ
նայի ինքնիշխանությանը», հայտ
րել է խաղաղության խորհրդի նա
գահ, գրող Օլես Գոնչարը խաղա
թյան խորհրդի եւ խաղաղության
նադրամի համատեղ նիստում:

Եգիպտա-լիբիակ
բարձր հանդիպ

Ինչպես հաղորդում է «Ազատությ
կայանը, կիրակի օրը չնախատեսվ
այցով Կահիրե է ժամանել Լիբ
նախագահ Մուամմար Քադդաֆին:
Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբ
քի հետ քննարկել է Արեւմուտքի եւ
ի միջեւ հակամարտության խնդ
Հանդիպման մասին մանրամաս
թյուններ չեն հաղորդվում:

Իսրայելն ու Հունգարի
մերձենում

«Մեր մերձեցումը Հունգարիայի
հարաբերություններում ընթանում է
հագնող տեմպերով», հայտարարե
Իսրայելի արտգործնախարար Շի
Պերեսը, Իսրայել այցելած Հունգա
յի արտգործնախարար Եսենսկու
անցկացրած բանակցություններից
տո:

[illegible]

Նոր տիեզերական մեկնարկը ծրագրված է հունվարի 24-ին

Ինչպես «ԻԹԱՌ»-ին հայտնեցին Գլավկոսմոսում, հունվարի 24-ին, 8.57-ին ծրագրված է «Սոյուզ ТМ-16» տիեզերանավի մեկնարկը: Տիեզերանավի անձնակազմում են. հրամանատար՝ Գենադի Մանակով, բորտինժեներ՝ Ալեքսանդր Պոլեշչուկ: «Միր» տիեզերակայանի հետ կցումը նախնական հաշվարկով կիրականացվի հունվարի 26-ին, 10.41-ին: Անձնակազմը պետք է տիեզերքում մնա մոտ կես տարի: Ենթադրվում է, որ հուլիսին կայան կուղեւորվի ռուս-ֆրանսիական համատեղ անձնակազմը: Կցումը պետք է իրականացվի ձեռքով: Այս գործողությունների ընթացքում պետք է մշակվեն տիեզերական կայանների հետ «Բուրան» եւ «Շաթլ» տիպի տիեզերանավերի կցման հնարավորությունները: Գլավկոսմոսում նշեցին, որ եթե ամեն ինչ բարեհաջող անցնի, առաջին անգամ տիեզերքում իրար կկցվեն երեք տիեզերանավ՝ «Սոյուզ ТМ-16», «Սոյուզ ТМ-15» եւ «Պրոգրես» բեռնատար տիեզերանավը: Արձակման գործողությունից հետո «Պրոգրես» բեռնատար տիեզերանավը պետք է հեռանա համակարգից եւ այնտեղ ռեժիմում յուրօրինակ «հովանոց» կազմի լուսարձակ նյութերը: Գիտնականների հաշվարկներով, այդ «հովանոցը» կարող է օգտագործվել արեւի ճառագայթները երկրի մակերեւույթին պրոյեկտելու համար: Իր պայծառությամբ շողքը կգերազանցի լուսնի լույսին: Փորձի հեղինակները ենթադրում են, որ այդպիսի «հայելիները» կարելի է օգտագործել արեւի գոտիներում գիշերային փրկարար աշխատանքների ժամանակ:

Լատվիայում քաղաքական քաշքշուկներ

[illegible] քաղաքական աղմուկը Լատվիայում սկսվել է Աշխատանքի դեմոկրատական կուսակցության ներսում: Կուսակցության ղեկավար [illegible], որ նաեւ խորհրդարանի պատգամավոր է, նախկինում եղել է ՊԱԿ-ի գործակալ, [illegible] շարքային կուսակցական [illegible] մեղադրել է հակասեմիտիզմի մեջ: Քանի դեռ հակառակորդները սուր վիճաբանում են մամուլում, [illegible] գործը լսվում է դատարանում: [illegible] դեմում հայցվորը խոստանում է փոխհատուցումը փոխանցել [illegible] հաշվին:

Ռոք երաժիշտը քաղաքապետության թեկնածու

[illegible] կուսակցության (նախագահ Էդուարդ Լիմոնով) խորհուրդը Մոսկվայի քաղաքապետության թեկնածու է առաջադրել «Կոռոզիա մետալլա» ռոք խմբի ղեկավար Սերգեյ Տրոիցկուն, «ԻԹԱՌ»-ին հայտնեցին կուսակցության մամուլի ծառայությունից: «Ես համամիտ չեմ կուսակցության որոշ կարծիքների, բայց պատրաստ եմ նշանավոր մարդկանց հետ պայքարել հանուն Ռուսաստանի ազատագրման», առաջադրման պահին ասել է Ս. Տրոիցկին:

Ժիրինովսկի. Տվեք ինձ իշխանություն, եւ բոլոր հանրապետությունները կվերամիավորվեն

Հունվարի 16-ին Մոսկվայում բացվեց Լիբերալ-դեմոկրատական կուսակցության համառուսական խորհրդաժողովը: Իր զեկուցման մեջ կուսակցության նախագահ Վլադիմիր Ժիրինովսկին անդրադարձավ երկրի վերակենդանացման ծրագրին: «Ամերիկացիները առանց մի կրակոցի փլուզեցին Խորհրդային Միությունը: Բայց տվեք ինձ իշխանություն Ռուսաստանում, եւ բոլոր հանրապետությունները առանց մի կրակոցի կվերամիավորվեն»: Նա նշեց կուսակցության միջազգային վարկի աճը, մասնավորապես հայտարարելով, թե «ԱՄՆ-ի նոր նախագահ Քլինթոնը արդեն մտածում է ինձ հետ [illegible] հանդիպելու հնարավորության մասին»:

Մշակույթ

Օպերայի ցրտաշունչ օրերը. Մայր թատրոնը 60 տարեկան է

Տակավին կենդանի հին երեւանցիներից եւ տարեց երեւանաբնակներից շատերը նույնիսկ այսօրվա [illegible] հեռվից չխամրող գույներով եւ անթաքույց ոգեւորությամբ են հիշատակում 1933 թվականի հունվար ամիսը, որի ընթացքում ընդամենը մի քանի օրվա տարբերությամբ տեղի ունեցան երկու կարեւոր իրադարձություններ: Մեկը նվագախմբի հնչյունների ներքո առաջին տրամվայի հայտնվելն էր մայրաքաղաքի փողոցներում, մյուսը՝ Օպերայի եւ բալետի պետական թատրոնի անդրանիկ թատերաշրջանի բացումը Աբովյան փողոցում գտնվող ներկայիս թատրոնի շենքում:

1933-ի հունվարյան ցրտաշունչ օրերին տեղի ունեցած խիստ տարբեր, բայց հիշարժան այս երկու իրադարձությունները ինչքան էլ տարբեր, այնուամենայնիվ միջնորդավորված ձեւով միմյանց հետ կապված էին: Նախ՝ այդ երկուսն էլ չծնվեցին դատարկ տեղում եւ ունեին նախապատմություն:

Երբ տրամվայի համար դեռեւս հիմք ծառայեց [illegible] այն ուղին, որով երկար ժամանակ Երեւանի փողոցներով արշավում էր հանրահայտ կոնկան՝ ձիաքարշը, ապա մինչեւ երեւանյան օպերայի բացումը նմանատիպ բազմաթիվ փորձեր արդեն արվել էին: Եթե նույնիսկ մատնացույց չանենք դարասկզբի Ալեքսանդրապոլում 1912-ին Ա. Տիգրանյանի «Անուշ»-ի առաջին բեմադրությունը սիրողական կազմով, ապա իրավունք չունենք չհիշելու նույն քաղաքում 20-ականների վերջին Շարա Տալյանի գլխավորությամբ օպերային թատրոնի հիմնումը, որում ներգրավվեցին Հայկանուշ Դանիելյանը, Լեւոն Խոջիկյանը, [illegible] եւ ուրիշներ: [illegible] եղավ այս թատրոնի [illegible], սակայն այն կարեւոր դասեր տվեց հետագայի այս տիպի ձեռնարկումների համար:

Չմոռանանք նաեւ Երեւանի [illegible] երաժշտանոցին առընթեր Ա. Սպենդիարյանի ստեղծած օպերային ստուդիան, որտեղ հիմնականում դրվում էին [illegible] եւ արեւմտաեվրոպական օպերաներից: Մեր օպերայի եւ բալետի ներկա թատրոնն ուրեմն բացվեց որպես շարունակություն ու զարգացումը երաժշտակատարողական արվեստի այս մարզում եղած հարուստ ավանդույթների:

Անկախ մեր օրերի ոչ հոբելյանական լինելուց, այս հոբելյանին հարկ է [illegible] վերաբերմունքով մոտենալ եւ [illegible] թեկուզ հետագայում այն հանդիսավորությամբ տոնելու հեռանկարից: Բանն այն է, որ օտարների կողմից, ինչպես արդեն ասել ենք, այս տարելիցը հաճախ բյուրիմացաբար նույնացվում է ընդհանրապես հայկական օպերայի հարուստ պատմության եւ դրա կենսագրության հետ: Այսպես, ուղիղ 10 տարի առաջ, երբ տոնականորեն նշվում էր այն ժամանակ Ալ. Սպենդիարյանի անվան, իսկ այժմ Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի հիսնամյա տարելիցը, շատերը թե՛ մեզանում, թե՛ դրսում այն ընկալեցին որպես հայկական օպերայի կեսդարյա հոբելյան: Այս իմաստով անդրադառնալ արժե այս տարի առանձնակի շուքով նշել մեր ազգային առաջին օպերայի՝ «Արշակ Երկրորդ»-ի 125-ամյակը, [illegible] համար [illegible] ստեղծագործող «հայկական Վերդի»՝ Տիգրան Չուխաջյանի [illegible]:

Վերադառնալով մեր [illegible] հոբելյարին, [illegible] որ այն իր [illegible] տրամվայի [illegible] որպես մինչեւ [illegible] իր դռները հանդիսատեսի առջեւ: Այս [illegible] է, որ [illegible] կարծում եմ, ոչ միայն ինձ: Իրեն անկախ հռչակած մի պետություն չի կարող գոնե տանելի ապահովել իր ազգային հպարտությունը հանդիսացող այն թատրոնի շենքը, որին հարող հրապարակում որպես քաղաքական գործիչներ կայացան նույն այդ պետության առաջատար այրերից շատերը: Զարմացնողն ու զայրացնողն այն է, որ յուրաքանչյուր ժամանակավոր վաճառատան տեր կարողանում է իր սեփական միջոցներով հատուկ շարժակայան գնել եւ աշխատացնել իր հաստատությունը, մինչդեռ դրանց եկամուտներից հարկ գանձող նույն պետությունն ի վիճակի չէ որոշ գումար տրամադրել իր մշակույթի օջախների կենսագործունեությունն ապահովելու համար:

Գուցե արժե՞ հետօրինակել Լորիս Ճգնավորյանի փորձը, որը դարձյալ իր անձնական նախաձեռնությամբ միջոցներ է հայթայթում եւ ստեղծագործական նորմալ պայմաններ ստեղծում Թամանյանի հրաշակերտած նույն շենքի հակադիր կեսում [illegible] իր երաժիշտների համար: Իսկ [illegible] ամեն [illegible] հնարավոր [illegible] ունեցող [illegible] եւ [illegible] Լենինգրադի օրինակը, որտեղ մշակութային կյանքը, չնայած շրջափակմանն ու [illegible] միայն [illegible] եւ [illegible] օգնեց իր քաղաքացիներին դիմակայելու դժվարություններին:

Կարծում եմ, [illegible] այս [illegible] թյունը, որ իր գոյության ողջ ընթացքում մեր Ազգային օպերայի եւ բալետի թատրոնը միշտ էլ վառ ու պատիվ է բերել հայկական արվեստին: Այստեղ են երգել Հայկանուշ Դանիելյանն ու Շարա Տալյանը, Պավել Լիսիցյանն ու Գոհար Գասպարյանը, իրենց երաժշտական փայլուն բեմադրություններն արել Միքայել Թավրիզյանն ու Օհան Դուրյանը:

Այսօր էլ, բարեբախտաբար, այստեղ աշխատում է շնորհաշատ երգիչ-երգչուհիների մի մեծ խումբ, որի կարողությունները առավելագույնս օգտագործելու միջոցով կարելի է զգալի հաջողությունների հասնել նույնիսկ այս օրհասական ժամանակներում: Ի հեճուկս մշակույթի առումով անհույս ժամանակների, անցած թատերաշրջանում կայացան Տ. Չուխաջյանի երկու մեծածավալ ստեղծագործությունների՝ «Արշակ Երկրորդ»-ի եւ «Լեբլեբիջի»-ի հաջող բեմադրությունները, որոնք նոր հույսերով լցրին թատերաերաժշտական այս ժանրի սիրահարների սրտերը: Հետագա ընթացքը, սակայն, կարծես թե դանդաղեց եւ երկար ժամանակ նախապատրաստվող Դոնիցետտիի «Պոլիեկտոս» օպերան այդպես էլ բեմ չհանվեց:

Ինչ խոսք, օպերան այնքան տարողունակ եւ բազմաբեւեռ երեւույթ է, մանավանդ հայկական օպերան, որ մեկ հոդվածով, որքան էլ այն ծավալուն լինի, հնարավոր չէ բացել դրա բոլոր ծալքերը: Ուստի եւ մեր թերթի էջերում ծրագրված եւ իրականացվող հաջորդ հրապարակումները, որոնցում կխոսվի մեր Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի տարբեր սերունդների երգիչ-երգչուհիների մասին եւ հարցազրույցներ կազմակերպվեն երաժշտական մայր թատրոնին մոտ կանգնած մարդկանց հետ, մեկ նպատակ են հետապնդելու. հիշյալ թատրոնի անցյալի հարուստ պատմության եւ ներկա վիճակի պատկերը ներկայացնելուց զատ, փորձել օգնել դրա հետագա զարգացման ուղիների նախանշմանն ու դրանց կենսագործմանը:

ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Թիման – Շորթ՝ 2,5:3,5

Շախմատի աշխարհի առաջնության Թիման-Շորթ հավակնորդների եզրափակիչ մրցամարտի 6-րդ պարտիան 54-րդ քայլում ավարտվեց ոչ-ոքի: Սպիտակներով խաղում էր Նայջել Շորթը: 3,5:2,5 հաշվով առջեւում է անգլիացի գրոսմայստերը, որը շատերի կարծիքով մրցախաղի ֆավորիտն է:

Թիման–Շորթ
3-րդ պարտիա
Թագուհու գամբիթ

1. d4 d5 2. c4 e6 3. Ձc3 Ձf6 4. Փg5 Փe7 5. e3 0-0 6. Ձf3 h6 7. Փh4 b6 8. Փe2 Փb7 9. Փ:f6 Փ:f6 10. cd ed 11. 0-0 Նe8 12. b4 c6 13. Թb3 a5 14. b5 c5 15. dc bc 16. Նac1 Փ:c3 17. Թ:c3 Ձd7 18. Նfd1 Թb6 19. Փf1 Նac8 20. h3 Ձf6 21. Ձd2 c4 22. a4 Նe6 23. Նc2 Նce8 24. Ձf3 Ձe4 25. Թa1 Նf6 26. Նd4



26. ...Ն:f3 27. gf Թg6+ 28. Փg2 Ձg5 29. Նc1 Ձ:f3+ 30. Աf1 Ձh2+ 31. Աg1 Ձf3+ 32. Աf1 Ձ:d4 33. Թ:d4 Թf5 34. Աg1 Նe5 35. Թa7 Թc8 36. Նf1 Նg[illegible] 37. Թd4 Թf5 38. f4 Նg6 39. Աf2 Աh7 40. Նd1 Թc2+ 41. Նd2 Թ:a4 42. b6 Թb4 43. Նb2 Թe7 44. Նa2 Թh4+. Ոչ-ոքի [illegible] համաձայնեցին:

Հակոբյանը հաղթահարեց առաջին արգելքը

Հոլանդիայի Վեյկ ան Զեե քաղաքում շարունակվող գրոսմայստերական շախմատային մրցաշարում երեւանցի Վլադիմիր Հակոբյանը հաջողությամբ հաղթահարեց առաջին արգելքը եւ իրավունք ստացավ շարունակել պայքարը գլխավոր մրցանակի համար:

Ինչպես տեղեկացրել էինք «Ազգ»-ի ընթերցողներին, անդրանիկ տուրում աշխարհի պատանիների եռակի չեմպիոնը հաղթել էր հոլանդացի Ֆրիսո Նեյբոերին: Հաջորդ օրը նույն մրցակիցները հանդիպեցին երկրորդ անգամ: Այս պարտիան Հակոբյանն ավարտեց ոչ-ոքի, եւ մինի-մրցախաղը շահելով 1,5:0,5 հաշվով, մրցաշարում մեկնարկած յոթ այլ լավագույնների հետ դուրս եկավ հաջորդ փուլ: Այստեղ պայքարի մեջ մտան ութ հռչակավոր գրոսմայստերներ եւս: Վիճակահանության համաձայն, Հակոբյանի հաջորդ մրցակիցն է Վալերի Սալովը:

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջին անակնկալը

«Մեծ սաղավարտի» ծրագրի մեջ մտնող 4 խոշորագույն մրցաշարերից անդրանիկի՝ Ավստրալիայի բաց առաջնության հենց 1-ին փուլում գրանցվեց 1-ին անակնկալը. պայքարից դուրս մնաց գլխավոր ֆավորիտներից մեկը՝ գերմանացի Բորիս Բեկերը: Առաջին արգելքները կարողացան հաղթահարել մյուս առաջատարները՝ Ջիմ Կուրյեն, Ստեֆան Էդբերգը, Պետր Կորդան, Միխայել Շտիխը: Կանանցից հաջորդ փուլ են դուրս եկել Շտեֆի Գրաֆը, [illegible] Մանուելա Մալեեւա Ֆրագնիերը: ■

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է «ԱՐԱՐԱՏ»Ը

Անցյալ մրցաշրջանը որքան էլ անհաջող, նույնքան էլ ուսանելի եղավ մեր հանրապետության երբեմնի լավագույն թիմի՝ Երեւանի «Արարատ»-ի համար: Թող որեւէ մեկի մոտ կասկած չլինի, որ այս տարի արարատցիները այլ տրամադրվածությամբ եւ այլ նպատակներով են մտնելու մրցապայքար: Նրանք ամեն ինչ կանեն իրենց հեղինակությունը վերականգնելու համար, չէ՞ որ հիմա էլ իրականում «Արարատ»-ն ամենաուժեղ կազմն ունի: Միայն այն, որ մեր ազգային հավաքականի գրեթե կեսը (9 ֆուտբոլիստ) կազմում են արարատցիները, դրա անժխտելի վկայությունն է: Եւ հետո տղաների վիրավորված ինքնասիրությունն էլ կստիպի արագորեն միջազգային ասպարեզ դուրս գալ, մանավանդ որ հիմա դրա համար լավ նախապայմաններ կան:

— Այո, նախորդ մրցաշրջանի դառը դասերից հետո այս տարի մենք անպայման կպայքարենք եւ չեմպիոնի կոչման, եւ գավաթին տիրելու համար,— ասում է «Արարատ» ակումբի նախագահ Սամվել Նավասարդյանը:

Օգտվելով առիթից նրան դիմում եմ այս ժամանակաշրջանի համար ավանդական դարձած հարցերով. ե՞րբ են սկսվել մարզումները, ովքե՞ր են հեռացել թիմից, ովքե՞ր են նորեկները, ի՞նչ հոգսեր կան եւ այլն:

— Նոր մրցաշրջանի նախապատրաստության աշխատանքներն սկսել ենք դեկտեմբերի 25-ին: Պարապմունքներն անցկացնում ենք տարբեր տեղերում՝ ֆուտբոլի հանրապետական մարզադպրոցի դաշտում, կամ մարզադահլիճում, «Սպարտակ» [illegible] մարզադաշտում, կամ ՁԷԿ-ի մարզադահլիճում: Մարզումները կշարունակենք մեր հանրապետությունում, քանի որ հայտնի պատճառներով ամենուրեք անհրաժեշտ պայմաններ չկան: Փետր[illegible] [illegible] է [illegible]

Արգենտինա:

Փոփոխությունները զգալի չեն: Նախ, ֆուտբոլը թողել է մեր փորձառու խաղացողներից մեկը՝ Ալբերտ Սարգսյանը: Վարդան Խաչատրյանին «Տորպեդո»-ի մարզիչների խնդրանքով թույլատրել ենք մասնակցել Սոչիում ընթացող այս թիմի ուսումնամարզական հավաքին: Առայժմ նրան փորձարկում են եւ մեր ու «Տորպեդո»-ի միջեւ դեռ վերջնական բանակցություններ չեն եղել ու պայմանագիր չի կնքվել: Նույնը կասեմ նաեւ Երվանդ Կրբաշյանի մասին, որին հրավիրել են ԲԿՄԱ: Առայժմ նա դեռ մեզ մոտ է եւ ԲԿՄԱ-ի հետ հավանաբար բանակցությունները կընթանան այս շաբաթվա վերջում:

«Արարատ» ենք հրավիրել կիսապաշտպաններ Արա Մարկոսյանին ու Արթուր Իգիթյանին «Նաիրի» թիմից, պաշտպան Հակոբ Մկոյանին «Մալաթիա»-ից: Փորձարկում ենք նաեւ մեր 2-րդ թիմի՝ «Լույս-Արարատ»-ի 6 խաղացողի: Ինչ վերաբերում է մեր հոգսերին, ապա դրանք բոլորի համար ընդհանուր են, կապված մեր սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի հետ: ■

[illegible]

Անկարա

ՕԶԱԼԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՍԿԼ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳՈ՞ՐԾՆ Է

Մեր թերթի նախորդ համարներից մեկում տեղեկացրել էինք, թե անցյալ տարվա դեկտեմբերի 20-ին, մի հավաքույթի ժամանակ Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն անդրադարձել էր նաեւ դարասկզբի իրադարձություններին՝ մասնավորապես հայտարարելով, թե այն ժամանակ Արդվին-Մերսին գծից արեւելք բնակչության 20 տոկոսը հայեր էին: Այնուհետեւ նա խոսել էր տեղահանության մասին՝ ասելով, թե դա իրեն հիշեցնում է Իսպանիայից Թուրքիա հրեաների գաղթը:

Շարունակելով միտքը՝ Թուրքիայի նախագահը հայտարարել է. «Մենք ուրիշ որեւէ երկրի վրա հարձակվելու դիտավորություն չունենք, միայն թե արգելիչ ուժ պետք է ունենանք՝ մեզ վրա կատարվելիք հարձակումներն արգելելու համար: Շատ նուրբ հողաշերտի վրա ենք գտնվում: Խորհրդային Միության փլուզումից առաջ ութ դրացիներ ունեինք, հիմա 12-13 հարեւան պետություններ ունենք, որոնց հետ պետք է հնարավորին չափ լավ հարաբերություններ ունենալ: Այսօր ծայրաստիճան սխալ է ուրիշի հողը գրավելը: Ձեր գլխին փորձանք կփաթաթեք: Մեր հողը մեզ բավական է: Ծոցի պատերազմի ժամանակ պնդեցին, թե ես Քերքուկի վրա աչք ունեմ: Սուտ է: Քուրդ ղեկավարները նույնպես ավելի առաջ նույնը պնդեցին, բայց ես վերահաստատեցի, որ ուրիշի հողերի վրա աչք չունենք»:

Նախագահների ելույթները միշտ էլ հետաքրքիր են, մանավանդ երբ խոսում է Թուրքիայի նախագահը եւ խոսում է հարեւանների հետ հարաբերությունների ու հայերի տեղահանության մասին: Թուրգութ Օզալի ելույթը խնդրեցինք մեկնաբանել Հայաստանի Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանին, որը թեեւ այն կարծիքին էր, որ ելույթի ամենալավ մեկնաբանությունը միայն պատմաբանը կարող է տալ, այնուամենայնիվ ասաց. «Իմ կարծիքով, Թուրքիայի նախագահը պարզապես ապահովագրում է իրեն: Բոլոր դեպքերում հետագայում անհրաժեշտության դեպքում նա կարող է հայտարարել, թե ես ժամանակին մեղադրել եմ հայերի տեղահանությունը: Իսկ ինչ վերաբերում է Իսպանիայից Թուրքիա հրեաների գաղթի հետ համեմատությանը, ապա այստեղ էականն այն է, որ Իսպանիայում հրեաները բնիկներ չէին, իսկ Արեւմտյան Հայաստանից տեղահանվածները բնիկներ էին»:

Հայաստանի արտգործնախարարության Թուրքիայի ենթաբաժնի վարիչ Մուրադ Բոջոլյանը հրաժարվեց պաշտոնական մեկնաբանություն տալ Թուրգութ Օզալի ելույթին՝ պատճառաբանելով, որ ամբողջական ճառն ու դրա արտասանման հանգամանքները իրեն հայտնի չեն: «Եւ այնուամենայնիվ Արդվին-Մերսին պայմանական գծից արեւելք հայերը բնակչության քսան տոկոսից ավելին էին: Նախագահը պարզապես ցանկացել է ցույց տալ, որ հայերն այդ տարածքում երբեք մեծամասնություն չեն կազմել: Ինչ վերաբերում է Իսպանիայից հրեաների արտագաղթին, ապա այնտեղ դրա պատճառները կրոնական էին», ասաց նա:

Ա. Բ.

Ռուսաստան

Ծառայում են «թեժ կետերում»

Ներկայումս ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվող խաղաղության վերահսկման միջոցառումներին մասնակցում է Ռուսաստանի 133 զինվորական դիտորդ, որոնք բաժանված են հինգ խմբի: Այդ մասին հունվարի 19-ին հաղորդել է Ռուսաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը:

Մասնավորապես, Պաղեստինում զինադադարի պայմանների կատարումը հսկող ՄԱԿ-ի մարմնում (պատասխանատվության գոտում են Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Իսրայելը, Հորդանանը եւ Կիպրոսը) ծառայում է ռուսաստանցի 29 զինվորական, 1991 թ. ապրիլին ստեղծված ՄԱԿ-ի իրաքա-քուվեյթյան խմբում՝ 15, Արեւմտյան Սահարայում հանրաքվեի անցկացման ՄԱԿ-ի խմբում՝ 30, Կամբոջայում ՄԱԿ-ի ժամանակավոր մարմնի կազմում՝ 47: Հարավսլավիայում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերում 1992 թ. մարտից ծառայում է ռուսաստանցի 12 զինվորական դիտորդ: ■

Լուրերի Հոսք

Ստավրոպոլում ծավալվում է երկրամասային կազակության կառուցվածք

Ստավրոպոլի երկրամասի Կուրսկի ստանիցայում ստեղծվել է Կազակների խորհրդի եւս մեկ բաժանմունք: Այդ կապակցությամբ օրերս ստանիցայում կազակական մեծ շրջան կհրավիրվի: Ինչպես հայտնում է «Ինտերֆախս» լրատվական գործակալության թղթակիցը, այսօր Ստավրոպոլի երկրամասի կազակական խորհուրդն իր կառուցվածքներում ունի 70 հազար մարդ:

Իսրայելն անտեսում է ՄԱԿ-ի բանաձեւը

Ինչպես հաղորդում է «Ազատություն» կայանը, Իսրայելի իշխանությունները շարունակում են անտեսել ՄԱԿ-ի համապատասխան բանաձեւը երկրից արտաքսված պաղեստինցիների վերաբերյալ: Վարչապետ Իցհակ Ռաբինը հայտարարել է, որ կշարունակի խորհրդակցությունները ՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, բայց զիջումների գնալու պատրաստակամություն չի հայտնել:

1992 թ. զոհվել է 22 ռուս դեսանտային

1992 թ. Ռուսաստանի եւ մերձավոր արտասահմանի տարածքում գտնվող «թեժ կետերում» զոհվել է 22 ռուս դեսանտային, ավելի քան 60-ը վիրավորվել: Այդ մասին «Կրասնայա զվեզդա» թերթին տված հարցազրույցում հայտնել է Ռուսաստանի օդադեսանտային զորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ Եվգենի Պոդկոլզինը: Նա ափսոսանք է արտահայտել, որ Ռուսաստանի հերոսի կոչման ներկայացված 9 դեսանտայիններից ոչ մեկն առայժմ չի ստացել այդ բարձրագույն պարգեւը: Ե. Պոդկոլզինը հայտնել է, որ դեսանտային զորքերն արդեն դուրս են բերվել Վրաստանից եւ Մոլդովայից (Աբխազիայում մնացել են Ռուսաստանի ռազմական օբյեկտները պաշտպանող դեսանտայինների գումարտակ եւ գունդ): Եկող տարի դեսանտային զորամասերը լիովին կհեռանան Ուկրաինայից, Ադրբեջանից, Մերձբալթյան հանրապետություններից:

Ղրիմի խնդիրը փակ է

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը հունվարի 18-ին Կիեւում լրագրողների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ, մեկնաբանելով 1993 թ. առաջին եռամսյակում Սեւաստոպոլի կարգավիճակը քննարկելու մասին Ռուսաստանի խորհրդարանի որոշումը, նշեց. «Ռուսաստանում ինչ-որ մեկի համար ըստ երեւույթին յափշտակիչ է կրկին քաշքշուկ հրահրել այդ խնդրի շուրջ, որը Ուկրաինայի համար ոչ իրավական, ոչ միջազգային տեսակետից խնդիր չի հանդիսացել: Մենք մտադիր չենք վերադառնալ այդ հարցին»: Նույն օրը Ղրիմի եւ Սեւաստոպոլի խնդիրներին նվիրված փակ խորհրդարանական լսումների ավարտից հետո կայացած մամուլի ասուլիսում միջազգային գործերի եւ արտաքին տնտեսական կապերի կոմիտեի անդամ Եվգենի Պուզովկինը հաղորդեց, որ ինքը գլխավորել է աշխատանքային խումբը, որը մշակում է Սեւաստոպոլի հարցի շուրջ փաստաթղթերը եւ թե այդ հարցը Ռուսաստանի խորհրդարանը կքննարկի 1993 թ. առաջին եռամսյակում: ■

Բանակ

Հայաստանը սպաներ է հրավիրում

Ինչպես հայտնում է «Սնարք» գործակալությունը, հայկական վստահելի աղբյուրներից «ՌԼԳ» գործակալությանը հայտնի է դարձել, որ Հայաստանի պաշտպանության նախարարությունը Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի պաշտպանության նախարարություններին խնդրել է Հայաստան գործուղել այդ հանրապետություններում ծառայող հայազգի սպաներին, ինչպես նաեւ ոչ հայազգի այն սպաներին, որոնք արդեն զորացրվել են, բայց որոնց տարիքը չի անցնում 50-ից: Հայաստանի պաշտպանության նախարարությունը խոստանում է սպաներին մեկ ամսվա ընթացքում ապահովել բնակարանով, ինչպես նաեւ վճարել նույնքան աշխատավարձ, որքան նրանք ստանում էին նախկին տեղում: Այնուամենայնիվ Բելառուսի պաշտպանության նախարարության լրատվական ծառայության պետ Չամեստալինի խոսքերով, Բելառուսի ռազմական գերատեսչությունը նման դիմումներ չի ստացել:

Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայության ղեկավար Արմեն Գուլյանը դեռեւս անցյալ տարվա վերջին տեղեկացրել էր, թե Հայաստանի պաշտպանության նախարարությունն իսկապես վերը նշված հանրապետությունների ռազմական գերատեսչություններին հասցեով նման կարգի դիմումներ է ուղարկել: Ուստի մնում է միայն կարծել, որ Բելառուսը նման դիմումներ չի ստացել թերեւս զուտ տեխնիկական պատճառներով: ■

Էներգետիկա

Ռուսաստանում բացակայում է ատոմային էներգիայի օգտագործման իրավական հիմքը

Ռուսաստանում չկա ատոմային օրենսդրություն եւ որպես հետեւանք բացակայում է ատոմային էներգիայի օգտագործման իրավական հիմքը: Այդ մասին հայտարարեց Դաշնակցային Ռուսաստանի ատոմային էներգետիկայի նախարարի տեղակալ Վիկտոր Սիդորենկոն խորհրդարանում տեղի ունեցած «Ռուսաստանում ատոմային էներգիայի օգտագործման մասին» օրենքի նախագծի լսումների ժամանակ: Հունվարի 18-ին ներկայացնելով օրենքի նախագիծը, Վ. Սիդորենկոն նշեց, որ փաստաթղթի հիմքում ընկած է ատոմային էներգիայի օգտագործման անվտանգությունն ապահովելու առաջնության սկզբունքը: Նա նշեց նաեւ, որ օրենքի նախագիծը նախատեսում է ատոմային էներգիայի օգտագործման ժամանակ վնասի եւ վտանգի գործոնների փոխհատուցում: Սիդորենկոյի կարծիքով, ատոմային էներգիայի օգտագործման մասին օրենքը հնարավոր է կիրառել արդեն 1993 թ.:

Ինչ վերաբերում է Ռուսաստանում ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարներին, փոխնախարարը հաղորդեց, որ մինչեւ 2005 թ. նախատեսվում է կառուցել ատոմային էլեկտրակայաններ ընդհանուր 10 հազար կՎտ ընդհանուր հզորությամբ: Ներկա պահին Ռուսաստանում գործում է 9 ատոմային էլեկտրակայան 20 հազար կՎտ ընդհանուր հզորությամբ:

Խորհրդարանի բնապահպանության կոմիտեի փորձագետ Գալինա Կարասեւան կոչ արեց մերժել օրենքի նախագծի մի կետ, որի համաձայն արգելվում է գործածած ռադիոակտիվ մնացորդները Ռուսաստան բերել հանրապետության տարածքում թաղելու նպատակով:

Ներկայումս Ռուսաստանում գործող 9 ատոմակայաններում շահագործվում է 28 էներգաբլոկ, 20 մեգավատ ընդհանուր կարողությամբ: Անցյալ շաբաթ նորոգվում էին Նովովորոնեժի ԱԷԿ-ի 4-րդ, Կալինինի ԱԷԿ-ի 1-ին բլոկները (Կենտրոնական Ռուսաստան), ինչպես նաեւ Լենինգրադի ԱԷԿ-ի 2-րդ բլոկը: Հիմնովին նորոգվում է Սմոլենսկի ԱԷԿ-ի 1-ին բլոկը, նվազ չափով՝ Կուրսկի ԱԷԿ-ի 3-րդ բլոկը:

Անցյալ շաբաթ Ռուսաստանի ԱԷԿ-ներում տեղի են ունեցել հետեւյալ դեպքերը. հունվարի 11-ին Նովովորոնեժի ԱԷԿ-ի 5-րդ բլոկում կարճ միացման հետեւանքով անջատվել է տուրբագեներատորը, էներգաբլոկի կարողությունը կրճատվել է 50 տոկոսով: Տուրբագեներատորը միացվել է ավելի քան մեկ ժամ անց: Հունվարի 14-ին Բալակովոյի ԱԷԿ-ի 3-րդ բլոկում (Պովոլժիե) սկսել է գործել վթարային պաշտպանությունը: Բլոկը վերագործարկվել է հունվարի 15-ին:

Հունվարի 15-ին Կալինինի ԱԷԿ-ի 1-ին բլոկի կարողությունը իջեցվել է 100 ՄՎտ-ի (կայանի կարողությունը 2000 ՄՎտ է): Նույն օրը բլոկում հիմնանորոգում է սկսվել: Հունվարի 15-ին Նովովորոնեժի ԱԷԿ-ի 5-րդ բլոկում տուրբագեներատորը կանգնեցվել է վթարային պաշտպանության համակարգերի անորակ նորոգման պատճառով: Տուրբագեներատորը միացվել է մեկ օր անց: ■

Կապեր

ԱՊՀ երկրները ֆինանսավորում են ավտոգործարանի շինարարությունը

Հունվարի 21-ին Մինսկում ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդում նախատեսվում է քննարկել Թաթարստանում Ելաբուգայի ավտոմոբիլային գործարանի շինարարությանը Համագործակցության պետությունների մասնակցության հարցը: Այդ մասին հունվարի 18-ին «ԻՖ»-ին հաղորդեց Թաթարստանի փոխվարչապետ Մանսուր Խասանովը: Նրա խոսքերով, շինարարական միավորման մեջ մտադիր են մտնել Ռուսաստանը, Թաթարստանը (բաժնեմասը 25 տոկոս սահմանված), Ուկրաինան (15 տոկոս), Բելառուսը եւ Ուզբեկստանը (բաժնեմասը 10 տոկոս), Ադրբեջանը (5 տոկոս): Փոխվարչապետի խոսքերով, արդեն ձեռք է բերվել սկզբունքային պայմանավորվածություն:

Մ. Խասանովը նշեց, որ միավորման մեջ ներգրավված հանրապետությունների տարածքում կտեղադրվեն համալրող արտադրամասերի տեղամասեր: Ինքը Թաթարստանի փոխվարչապետը նշանակվել է Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հրամանագրով ստեղծված հանձնաժողովի փոխնախագահ, որը պետք է վերահսկի ավտոգործարանի շինարարությունը:

Ելաբուգայի գործարանի շինարարությունը սկսվել էր 70-ական թվականներին: Սկզբից նախատեսվում էր տանկերի արտադրությունը, հետո ավտոմեքենաների: Ներկա պահին շինարարությունը սառեցված է միջոցների պակասության պատճառով: ■

NORINVEST

«ՆՈՐԻՆՎԵՍՏ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

շարունակում է ֆինանսավորել կարճաժամկետ նախագծերը.
- "Philip Morris" ֆիրմայի արտադրության Marlboro եւ Marlboro Lights ծխախոտներ
- շվեյցարական սննդամթերք. ինչպիսիք են Toblerone, Milka շոկոլադները, Benco կակաոն:

Ձեր ներդրման երաշխավորված շահութաբերությունը՝ 40% 2 ամսվա ընթացքում:
Դուք կարող եք մասնակցել նաեւ երկարաժամկետ ֆինանսական նախագծերին՝ տարեկան 180% երաշխավորված դիվիդենտներով եւ շահույթի ամեն եռամսյակ վճարմամբ:

Ձեզ հետաքրքրե՞ց մեր առաջարկը:

Զանգահարեք մեզ 56 19 31 հեռախոսահամարով:
Մեր հասցեն՝ Արովյան 14, («Երեւան» հյուրանոց)
2 հարկ, 103 սենյակ:

Մեր Կողքին

Թմրամոլությունն Իրանում

1992 թ. վերջում Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբիում տեղի է կայացել սեմինար նվիրված թմրանյութերի դեմ պայքարին: Սեմինարին մասնակցել են երրորդ աշխարհի 30 երկրների ներկայացուցիչներ: Սեմինարի աշխատանքի երրորդ օրն Իրանի Իսլամական Հանրապետության դատախազության ղեկավարը խոր մտահոգություն է հայտնել Պաքիստանի եւ Աֆղանստանի սահմանամերձ շրջաններում թմրանյութերի արտադրության կտրուկ ավելացման առիթով (արտադրությունը հայտնի է «Ոսկե կիսալուսին» անվանմամբ) եւ հայտարարել է, թե դրա հետեւանքով մեծանում է նաեւ թմրանյութերի մաքսանենգ տեղափոխումն Իրան, իսկ Իրանից էլ Եվրոպա:

1992 թ. առաջին կիսամյակում Իրանում բռնագրավվել է 5600 կգ հում մորֆին, որը մաքսանենգները մտադիր էին անցկացնել Եվրոպա:

Իրանական դատախազության ղեկավարը ներկայացրել էր վիճակագրական տվյալներ 1992 թ. առաջին կիսամյակում իրանական իրավապահ մարմինների՝ թմրանյութերի եւ մաքսանենգների դեմ տարվող պայքարին ուղղված ակտիվ գործունեության վերաբերյալ: Նա ասել է, թե Իրանի Իսլամական Հանրապետության իրավապահ մարմիններն այդ ընթացքում հայտնաբերել եւ բռնագրավել են ավելի քան 20740 կգ օփիում, 1544 կգ հերոին, 5611 կգ մորֆին եւ 2506 կգ հաշիշ:

Այս ընթացքում ձերբակալվել են 11 778 մաքսանենգներ, որոնցից առգրավվել է 419 միավոր զենք: Բացի այդ, ձերբակալվել է 11 500 թմրամոլ:

ՆՏ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՅՈՒԼԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562663

© Apple® Macintosh®
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորումն եւ տառատեսակների հեղինակն ՊԱՎԵԼ ՊԱԼԱՅԱՆ

11 նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2

Գրանցման թիվ 65. Ինդեքս 69149. Տպաքանակ 20.000. Պատվեր 1432

Ստորագրված է տպագրության 19.1.199